

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ (ՏԱԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ) ԿՅԱՆՔԸ, ՀԱՆՐԱՅԻՆ
(ԱՄՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալի մեր գրողների՝ Հ. Պարոնյանի, Պ. Պռոշյանի, Մուրացյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի և այլոց պես Կ. Աելիք-Շահնազարյանը, կենսապահովման խնդիրներով մտահոգ՝ անմոռունջ տարել է մեծահարուստների ու պաշտոնյաների կամայականություններն ու կատարել գրականության հետ կապ չունեցող աշխատանքներ: Կ. Աելիք-Շահնազարյանի կյանքը, գրական, մանկավարժական ու հանրային գործունեությունը հնարավոր չէ գատել նրա գյուղատնտեսական գործունեությունից նախ այն պատճառով, որ լինելով վկայված գյուղատնտես, նա, հավատարիմ իր դավանանքին, որ, ամենայն բարիքի աղբյուրը եողն է, անձնվիրաբար ծառայել է այն արգավանդ դարձնելու գործին և ապա՝ քառասուն տարիների ընթացքում լույս է ընծայել բազմաթիվ տեսական-մասնագիտական գրքեր ու գրքույկներ, նշանակալից ավանդ ներդրել Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման ասպարեզում և մշակել հայերեն լեզվով գյուղատնտեսական տերմինների, տեխնիկական հասկացությունների հարուստ բառապաշար:

Կ. Աելիք-Շահնազարյանի ինքնագիր առիմագրությունը¹ վստայում է, որ նա սերել է Խաչենի իշխանության Սողոք գավառից XVI-XVII դարերի սահմանագլխին Վսրանդյա տեղսփոխված հայտնի Շահնազարյանների մելիքական տոհմից: Ըստ մեր ձեռքի տակ գտնվող մի այլ փաստաթղթի² նա ծնվել է 1857թ. ապրիլի 17-ին Շուշիում, զինեզործ Կարապետ բեկ Մե-

լիք-Շահնազարյանի և Բեգլսր Յուզրաշի Շա-եիջանյանցի դստեր՝ Հասագյուլի ընտանիքում ու մկրտվել ապրիլի 25-ին Շուշիի Ղազանչեցոց սուրբ Ամենափրկչ եկեղեցու քահանա Իվանե Տեր-Գաբրիելյանի կողմից՝ կնքահայր ունենալով Մովսես Թևոս-Յուզրաշյանին՝:

Կարապետ բեկի հայկական ավանդական գերդաստանը ռազմանդամ էր. երեք աղջիկ՝ Սոփիան, Անուշկան, Մարիամը և չորս տղա՝ Ալեքսանդրը, Գրիգորը, Սողոմոնը, Կոնստանդինը: Ընտանիքը ապրում էր «Քյոհնա հանգստի թաղում»՝ երկհարկանի տանը, որի առաջին հարկը չորս պուների վրա կոթնած մի դստրադամ՝ էր՝ մեջտեղը մի փոքրիկ թոնիր՝ երեսը կարպետով ծածկած: Ձմռանը այդ դարադամում էին քնում, հյուր ընդունում: Երկու սենյակներից մեկը հորեղորո ննջարանն էր, մյուսը՝ պապի եղորո, և մի մութ սենյակ, որ մահամի դեր էր կատարում: Երկրորդ հարկը, որին «թախտափուշ» էին ասում, ռաղկացած էր մի ոչ մեծ սենյակը՝ շարժական դռնով ու փոքր պատշգամբով:

Կոնստանդինի հայրն ու հորեղբայրը՝ Հովսեփ րեկը, զինի, օղի, ոռն և այլ խմիչքներ էին պատրաստում, լայց շուտով վրա է հասնում դժբախտությունը. հինգ տարեկանում Կոնս-

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ.Ա.Աելիք-Շահնազարյանի ֆոնդ, գործ 90:

² Անդ, գ. 184:

* Կ.Աելիք-Շահնազարյանի կյանքի ուղու շարադրանքի համար հիմք է ծառայել հեղինակի թողած ընդարձակ ինքնակենսագրությունը, ԳԱԹ, Կ.Ա.Աելիք-Շահնազարյանի ֆ., գ.177: Հայ նոր գրականության պատմության IV հատորը (Երևան, 1972, էջ 572) և Գրական տեղեկատուն (Երևան, 1986, էջ 558) Կ. Աելիք-Շահնազարյանի ծննդյան թվականը համարում են 1856-ը: Այնինչ Կ. Աելիք-Շահնազարյանի ծննդյան վկայականը, ինչպես նաև ինքնակենսագրությունը փաստում են, որ նա ծնվել է 1857թ. (ԳԱԹ, Կ.Ա. Աելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 177, 184):

* Ժողովրդական առև Ղարարադում:

տանդինը գրկվում է հորից, և նրանց ռազմա-
դամ ընտանիքը (յոթ երեխա) մնում է եորեղբոր
խնամքին: Ութամյա տղան սկզբում հաճախում
է «բանաստեղծ Արությունի»³, իսկ 1866թ. տե-
ղափոխվում է վարժապետ Բարաջանի դպրո-
ցը: Ինքնակենսագրության մեջ նա հուժնորով
պատմում է այդ դպրոցներում իշխող տերթո-
դիկյան կրթական եղանակի մասին, ուր աշա-
կերտները պահում էին քառասուն հողվածից
րադկացած պատժատետրեր:

Մի քանի ամիս մնալով, առանց «րարեկար-
գիչ» քանոնի հարվածների տակ ընկնելու,
1867թ. Կոնստանդինը ուսումը շարունակում է
վարժապետ Ալեքսանի դպրոցում, որտեղ դա-
սավանդում էին հայոց լեզու, ռուսաց լեզու,
կրոն, վայելչագրություն: Արդեն այդ տարիներ-
ին Կ. Մելիք-Շահնազարյանը ուսանավորներ
գրելու փորձեր է անում: Սակայն տարեվերջի
հարցաքննության հանդեսին, «երր դասիճը
զարդարված, սեղանը կարմիր մահուդով ծածկ-
ված, ուսուցիչները փայլուն համազգեստով
ներս ու դուրս են անում, այնպիսի վախ են ազ-
դում մանուկ Կոնստանդինի վրա, որ նա թող-
նում, փախչում է դպրոցից՝ առանց քննության
ներկայանալու»⁴: 1869թ. սեպտեմբերին նա ըն-
դունվում է Շուշիի թեմական դպրոցի առաջին
դասարանը: Ղարարադի հայոց թեմական հո-
գևոր դպրոցն ուներ ծրագիր ու կանոնադրու-
թյուն, ավանդվում էին հանրակրթական առար-
կաներ, ուսուցումը կազմակերպված էի համե-
մատարար առաջադիմական մեթոդներով ու
մանկավարժական կարող ուժերով: Թեմակա-
նում Կոնստանդինը աշակերտում է նշանավոր
հայկարան Մաղաքիա Պլուզյանին, սովորում է
Գրիգոր Տեր-Յովհաննիսյանի (Մուրացան), Ա-

ռաքել Բարախանյանի (Լեո), Նիկողայոս Տեր-
Ավետիքյանի (վարդապետ), Խաչատուր Յարա-
միշյանի (ինժեներ) և այլ ապագա նշանավոր
գործիչների հետ:

Թեմականում Մելիք-Շահնազարյանը երգի-
ծական ուսանավորներ էի գրում դասընկերների
չարաճճիությունների, ուսուցիչների և աշա-
կերտների դպրոցական առօրյայի մասին⁵:

1871–1874 թթ. սովորելու ընթացքում Կ. Մե-
լիք-Շահնազարյանը ցուցաբերում է գերազանց
առաջադիմություն: 1874 թ. հունիսին՝ ավար-
տական վկայական ստանալու օրը, տեսուչ
Խորեն Ատեփանեի հանձնարարությամբ, հան-
րության առջև նա հանդես է գալիս շնորհակա-
լական ուղերձով՝ ուղղված թեմական առաջ-
նորդ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալա-
լյանին: Թեմականն ավարտելուց հետո նա տե-
ղափոխվում է Ջարրայել (Կարյազին), ուր գտ-
նվում էր Մելիք-Շահնազարյանների ընտանիքը
(հորեղբայրն ուներ շերամատուն, մետաքսի
փոքրիկ գործարան և խանութ, իսկ Կոնստան-
դինի երկու եղբայրները ծառայում էին տեղի
մաքսատանը): Ջարրայելում Կոնստանդինը
լուր է ստանում, որ էջմիածնի ճեմարանում սո-
վորելու համար հինգ-վեց լավագույն աշակերտ
ընտրելու նպատակով Շուշի է եկել Արիստակես
վարդապետ Աեդրակյանը: Ուսումնատենչ պա-
տանին փութով հասնում է Շուշի, սակայն պար-
զվում է, որ վարդապետն արդեն այնտեղ չէ: Այ-
նուհանդերձ քրոջ ամուսինը՝ Գրիգոր Տեր-
Ղազարյանը, Սիմոն Հախումյանի, Նիկողայոս

³ Այդ դպրոցը ուներ սր դուռ, սր պատուհան և առաստաղի
միջից բացված օդանցք: Վարժապետը նստում էր գետնին
փռած կարպետի վրա՝ մի երկար ճիպոտ կողքին, մեկ-մեկ
կանչում էր փոքրիկ «դռնակների»՝ վրա շարքով նստած ա-
շակերտներին, ովքեր չոքում էին և այբբենարանից, սաղ-
մոսատետրից, ժամագրքից սր քանի տող կարդում: Մի
քառ սխալվելու դեպքում՝ «սիլլա» էին ուսում կամ ժամե-
րով չոր հողի վրա չոքած մնում:

⁴ Մանրիկահայ հանրագիտակ, տարեգիրք, Բոստոն, 1925,
էջ 166:

⁵ Մի օր, երբ դասընկերների ծիծաղի ուղեկցությամբ, Կոն-
ստանդինը կարդում էր իր գրած «Իմ ճանապարհորդու-
թյունը մոծակի վրա՝ Շուշուց - Ամերիկա» ուսանավորը,
ներս է մտնում թեմականի վերակացու Բողդան Բաղդա-
սարյանը, ձեռքից առնելով ընթերցում է այն, քմծիծաղ
տալով՝ ասում. «Փուչ կենդանի, էս ինչ լավ ես գրում»: Այդ
խոսքերից ոգևորված՝ պատանին հաճախակի է ընկերնե-
րի պատվերով երգիծական ուսանավորներ հորինում: Սա-
կայն թեմականի երրորդ դասարանի աշակերտ, արդեն
«հեղինակավոր բանաստեղծ» Գրիգոր Տեր-Յովհաննիսյա-
նը (Մուրացան) սկզբում թերաեավատորեն է վերաբեր-
վում Կոնստանդինի բանաստեղծական ծիբքին և դասըն-
կերների ներկայությամբ պահանջում է իր առաջարկած
թեմայով հորինել հանգավոր ուսանավոր: Փորձությունից
պատվով դուրս գալով՝ Կոնստանդինը ևս դպրոցական շո-
ջապատում ճանաչվում է որպես բանաստեղծ:

Տեր-Ավետիքյանի, Արսեն Յարամիշյանի, Հովակիմ Յուզբաշյանի հետ նրան կառքով ճամապարհում է էջմիածին: Այդ ուղևորությունը խոր տպավորություն է թողնում պատանու վրա: «Ես առաջին անգամ էի տեսնում հայ քաղաքը, գրում է նա,՝ Սևանա լիճը և մեր պատմական պատկանելի մեծ ու փոքր Մասիսները՝ իրենց ծյունապատ գագաթներով: Ես չկարողացա արտասուքս պահել, քանի՜-քանի՜ ցավեր, ավեր ու կոտորածներ էի տեսել այդ ծերունին»⁵:

Հայոց լեզվի քննության ժամանակ աշակերտներից պահանջվում էր գրարարով երկու թեթից բաղկացած շարադրություն գրել: Կոնստանդինի «Առ լյառն Մասիս» շարադրության մեջ չի սպրդում քերականական որևէ սխալ: Երջանիկ պատահականությամբ իմանալով Արիստակես վարդապետ Սեդրակյանի Շուշի կատարած այցի մասին, համառորեն էջմիածին հասնելով և դրսևորելով իր գիտելիքները՝ նա իրավունք է ստանում սովորելու Գևորգյան ճեմարանում: Այստեղ դասավանդում էին ժամանակի անվանի մանկավարժները. սաների ընդհանուր պատրաստվածությունը, կարգապահությունը գտնվում էր տվյալ ժամանակի համար ամսովոր ռարժր մակարդակի վրա: Այդ տարիներին ճեմարանի տեսուչն էր Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը՝ ծովանկարիչ Հովրաննես Այվազովսկու եղբայրը: Ճեմարանում նա ձեռք է բերում գիտելիքների հիմնավոր պաշար, ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմությունը, մատենագրությունը, հաղորդակցվում գեղարվեստական խոսքի հմայքին, ուսանում հին ու նոր գրական լեզուներ (գրարաը և աշխարհաբար), ընական գիտություններ: Ճեմարանականներին ռուսաց պատմություն էր դասավանդում Գևորգ Սուրենյանցը՝ ապագա Ամենայն հայոց կաթողիկոսը: Այստեղ պարգորոշ դրսևորվում են պատանու գրական հակումները: 1876թ. Մելիք-Շահնագարյանը խմբագրում է աշակերտական «Մանրանկար» գրաբար ձեռագիր ամսագիրը, ուր գետեղվում էին ճեմարանականների ուղանավորները, ոուսերենից կա-

տարած թարգմանությունները, գիտական, պատմական, կրոնական տեղեկություններ: Սերը մայրենիի նկատմամբ նրան կապում է էջմիածնի մատենադարանի հետ: Ուսումնասիրելով սկզբնաղբյուրները՝ Կ. Մելիք-Շահնագարյանը ձեռնամուխ է լինում գրաբար-աշխարհաբար և աշխարհաբար-գրաբար բառարաններ կազմելու աշխատանքներին՝

Ժողովրդական, բարբառաին խոսքը մատչելի դարձնելու նպատակով նա հետագայում կազմում է նաև բարբառային բառերի բացատրական բառարան (հավելված Ղարաբաղի լեզվի բառերի)⁶: 1877թ. էջմիածնում Կ. Մելիք-Շահնագարյանը ոուսերենից թարգմանում է Կարանգինի «Թշվառ Լիզան»: Գաբրիել արքեպիսկոպոսի աչքից չի վրիպում նրա «գրական-հրատարակչական գործունեությունը», և քանի որ տեսուչը գիտեր խրախուսել սաներին՝ իր ձեռքով գրված գովասանագիր է հանձնում «Մանրանկարի» խմբագրին:

Արդեն իսկ 1874 թվականից Գաբրիել արքեպիսկոպոսը համատեղության կարգով նշանակված էր Թիֆլիսի թեմի առաջնորդ և բազմագբաղ լինելով՝ չէր հասցնում ճեմարանն իր անմիջական հսկողության ներքո պահել: Առիթից օգտվելով՝ ուսուցիչներից ոմանք նախկին եռանդով չէին աշխատում: Վերակացուների վերաբերմունքը նույնպես դժգոհությունների տեղիք է տալիս: 1878թ. վերակացուների կամայականությունների դեմ ուղղված ուսանողական հուզումներին մասնակցելու պատճառով Կոնստանդինը վտարվում է ճեմարանից: Նույն թվականի ապրիլին նա աշխատանքի է անցնում Ջաբըայելի մաքսատանը և շարունակում գբաղվել գրականությամբ: Հրաժարվելով հայոց պատմությունը գրաբարով չափածո շարադրելու իր վաղեմի մտադրությունից՝ Կ. Մելիք-Շահնագարյանը Ղարաբաղի բարրառով սկսում է գրել «Դըլըցե կնանոց պընը-փեշակը» գրքույկը, թղ-

⁵ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, թ. 11:

⁶ 1933թ. մարտին Կ. Մելիք-Շահնագարյանը վերոհիշյալ բառարանները հանձնում է Գաբրիել Լևոնյանին որպես օգնություն հանրագիտական ռառարան կազմողներին (ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, թ. 60):

⁷ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 89:

թակցում է Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթին:

1878թ. սեպտեմբերին Կոնստանդինը գնում է Բաքու ազգականների մոտ: Մոսկվայի Լազարյան ճեմարան ընդունվելու փափագը՝ հանգիստ չի տալիս նրան: Աջակցություն ստանալու խնդրանքով՝ Կոնստանդինը դիմում է Բաքվի Մարդասիրական ընկերությանը, մեծաեարուստ Ավան Յուզրաշյանին, հայտնի մեկենաս Սանասարյանցին և այլոց, ըայց, ցավիք, նրանցից և ոչ մեկը օգնության ձեռք չի մեկնում ուսումնաստենչ երիտասարդին:

Բաքվում Մելիք-Շահնազարյանը անդամագրվում է Հովհաննես Տեր-Գրիգորյանի (հետագայում՝ Վահան վարդապետ) հիմնած «Հայաստանի վերածնություն և ազատություն» ընդհատակյա ընկերությանը, որի անդամները՝ ճեմարանական Գալուստ Տեր-Մկրտչյանը, ուսուցիչներ Դավթյանն ու Պապովյանը և այլոք ուխտել էին անձնական խնդիրներից վեր կանգնելով՝ նյութապես և հոգեպես աջակցել հայ ժողովրդի վերածնությանը: Այստեղ նա մտերմանում է շուշեցի Սերգեյ Սրրահամյանի հետ: Նրանք միասին՝ իրեն սիրող դերասաններ, հանդես են գալիս Սաֆրազյանի⁷ խմբի ներկայացումներում: Բաքվից Մելիք-Շահնազարյանը նամակ է հղում եղբորը՝ խնդրելով, որ հարազատները չսպասեն իր վերադարձին, որովհետև ինքն այլևս պետք է ծառայի ազգին:

Բաքուն 1870-ական թվականներին անշուք, փոշոտ քաղաք էր՝ կառուցապատված մեծ մասամբ միհարկանի տներով, երկաթուղի չկար: Չորս վերշոկ հաստությամբ փոշին վիրացնելու համար փողոցները «ջրում» էին սև նավթով (նավթը էժան էր, փութը՝ երեք-չորս կոպեկ): Բայց նավթի գինը ընդհանրապես պես իրավի-

ճակը փոխվում է: Կոնստանդինի Բաքվում մնալը դառնում է ավելորդ. ստեղծված պայմաններում նա ընտ պիտի դառնար ազգականների համար:

Սակայն մայր ժողովրդի ծանր վիճակը հանգիստ չի տալիս նրան: Անցնելով Դերբենդ՝ նա Հայաստանի վերածնության օգտին հինգ հարյուր ռուբլի է հավաքում և փոխանցում ընդհատակյա ընկերության զանձապահ Առաքել Ծատուրյանին: Հավաքված այլ գումարների հետ այն ուղարկվում է Սասունի սովյալներին:

1878թ. հունվարին Աստրախանի երկսեռ հոգևոր թեմական դպրոցի հոգաբարձության անունից Հովսեփ ավագ քահանա Բունիաթյանը Կ.Մելիք-Շահնազարյանին հրավիրում է վերոհիշյալ դպրոցում հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, եվելեցական պատմություն, թվարանություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն դասավանդելու⁸: Մինչ Մելիք-Շահնազարյանը ճշտում էի ուսուցչական աշխատանքի հրավերը և պատրաստվում ուղևորվել Աստրախան, ճանապարհին դեպքերն այլ ընթացք են ստանում: Դերբենդում պատահաբար ներկա գտնվելով օրհորդաց դպրոցի ընթացման հանդիսավիր արարողությանը՝ նա հանապատրաստից ելույթով կարևորում է նման դպրոցի անհրաժեշտությունը, հրավեր է ստանում և 1878թ. դեկտեմբերից մինչև 1880թ. ավագ դասատուի պաշտոնով աշխատում է այդ կրթօջախում: Նա կրթօջախն անվանակոչում է Մարիամյան: «Իմ ճառից հետո ինձ ծանոթ ու անծանոթ տեղացիք վիա թափվեցին, պատմում է Մելիք-Շահնազարյանը, որ ես պետք է մնամ ու կազմակերպեմ ինչ որ հարկն է: Ես պատրաստել տվի սեղաններ, մատարաններ, ընդել տվի դասագրքեր և այլն»⁹:

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Մարիամյան դպրոցը առաջադիմում է: 1879թ. հունվարի տվյալներով աշակերտների թիվը այստեղ հասնում էր 40-ի. մեծ մասը՝ 8-12 տա-

⁷ Մտեհանուս և Ալմա Սաֆրազյան ամուսինները ակտիվորեն մասնակցում են ոչ միայն Բաքվի, այլև Շուշիի թատերական կյանքին, կազմակերպում են հյուրախաղեր (1882 և ապա՝ 1892թթ.): Սաֆրազյանն առաջինն է խաղում Օթելլոյի դերը Շուշիում-Թ. Հ.: (Այդ մասին մանրամասն տես՝ *Т. Айрапетян*, Шушинский театр им. Н. Хандамияна (вторая половина XIX в. - первые десятилетия XX в.), Շուշիին նվիրված հոդվածների ժողովածու, Москва, (տպագրության ընթացքում է):

⁸ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 214:

⁹ Ամր, գ. 198:

րեկան, գրաճանաչ չէր և սովորում էր դպրոցի առաջին բաժանմունքում, իսկ այրուբենին ծանոթ 12-16 տարեկան աղջիկները՝ երկրորդ բաժանմունքում: Աշակերտուհիներից վեցը ռուսախոս հայեր էին, երկուսը գերմանացի՝ տեղական սափրսի գործարանի կառավարչի աղջիկները: Նորաստեղծ դպրոցը սիրելի է դառնում աշակերտուհիների համար: Նրանք երգում են Կ. Մելիք-Շահնազարյանի կազմակերպած երգչախմբում, եռանդով պատրաստում դասերը, իսկ ավագ դասատուն լրացուցիչ պարապում է ետ մնացողների հետ: Վեց ամսվա ընթացքում աշակերտուհիները յուրացնում են տարվա դասընթացը: Հայերենին բոլորովին անծանոթ գերմանուհիները վաթ լարդում են հայերեն և գրատախտակին անսխալ նախադասություններ գրում:

1878թ. Կ. Մելիք-Շահնազարյանը Դերբենդում ծանոթանում է Ս. Սպանդարյանի հետ և վերջինիս խնդրանքով նյութեր է ուղարկում Պ. Սիմոնյանի խմբագրած «Մեղու Հայաստանի» թերթին, իսկ 1884 թվականից՝ նաև «Նոր-Դարին»: Մինչ այդ՝ նա եռանդով թղթակցում էր «Մշակին»: 1879-80թթ. ռուսերենից փոխադրած ու թարգմանած քսանից ավելի մանկական գրականության մուշներ է ուղարկում թիֆլիսի «Փորձ» ամսագրին և տեղի Հրատարակչական ընկերության ղեկավար Գաբո Միրզոյանին. «Ամնողելի ծույլ Պետրոսը», «Լիլի կամ հակինթե խաչ» (ևև անտառի պատմությունը), «Ճշմարտախոս Պետրոսը», «Փոքրիկ հնոսիավաճառը», «Աշխատանքի օր անտառում. մրջյուններ», «Փոքրիկ նվագածու կամ Մոցարտի մանկությունը» և այլն, որոնց մեծ մասը, ցավոք, մնացել է անտիպ¹⁰: Ռուսական գործերի կուրմից Կարսի առման և գեներալ Լազարևի քաջությանը նվերված նրա «Հայոց դյուցազնը 1877 թվականին» բանաստեղծությունը տպագրվում է Մոսկվայի «Փարոս Հայաստանի» ամսագրում (1881թ.)¹¹:

¹⁰ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 33, 56, 64, 66, 71:
¹¹ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ ռուսական զորքը Վաղարշապատով անցնում

1879թ. փետրվարին Բաքվի Մարդասիրական ընկերությունը կրկին մերժում է Կ. Մելիք-Շահնազարյանի՝ ուսումը շարունակելու նպատակով ֆինանսական օժանդակություն ստանալու խնդրանքը: 1880թ. նա նույն խնդրանքով դիմում է Փարիզի Հայկազյան ուսումնասիրաց ընկերությանը և դարձյալ մերժում է ստանում նյութական միջոցների սղության պատճառաբանությամբ: Մելիք-Շահնազարյանին հետաքրքրում է, թե Ֆրանսիայի ո՞ր գյուղատնտեսական դպրոցում ինքը կարող է Կովկասի կամ Հայաստանի կլիմայական պայմաններին համապատասխան գիտելիքներ ստանալ: 1881թ. այդ հարցերի վերաբերյալ նրան մանրամասներ է հայտնում ճեմարանական ընկեր Հմայակ Մոլոմոնյանը, ով գյուղատնտեսական բարձրագույն կրթություն էր ստանում Ֆրանսիայում:

1880թ. Կ. Մելիք-Շահնազարյանն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի լսարանական բաժին: Այդ տարիներին ճեմարանում հայոց լեզու էր դասավանդում Մկրտիչ Եմինը: Սակայն նյութական միջոցներ չունենալով ամիսներ անց նա վերադառնում է Դերբենդ և շարունակում իր մանկավարժական գործունեությունը: Այստեղ Մելիք-Շահնազարյանը հիմնադրում է Ս. Մեսրոպյան գրադարան-ընթերցարանը, ծանոթների և աշակերտների ջանքերով այն կաեավորում: Ընթերցարանը ստանում էր 20 անուն թերթ ու ամսագիր: Աշակերտներից թատերական խումբ կազմելով՝ ինքն անձամբ բեմ է սարքում, Մայր Հայաստանի, Արա Գեղեցիկի պատկերներով ձևավորում այն և հանդես գալիս իր իսկ ստեղծած թատերախմբում՝ թե՛ իբրև հուշարար, և թե՛ իբրև դերասան: Ուշագրավ են նրա թատերգությունները, որոնք գրվել, թարգմանվել կամ փոխադրվել են ռուսերենից ու ֆրանսերենից, ի շարս որոնց հիշա-

էր դեպի թուրքական սահմանը, ճեմարան են այցելում հայազգի գեներալներ Հովհ. Լազարև, Ա. Տեր-Ղուկասով, կովկասյան կորպուսի երամանատար Մ. Լորիս-Մելիքովը: Լազարևը հավաքելով ճեմարանական դարաբաղցիներին ասում է. «Հոր ընթ ըստեղ մտալ, եկիք տանիմ կովի, բարութին վեար մին քորներավըտ անց կենա, դոչ-չաղ կացիք, Դարարադին անընդ ապիավը չտաք» (ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 18):

տակության են արժանի. «Կույր» (1877թ.)՝ դրամա երկու գործողությամբ, «Փոքրիկ նվագաժուկան Սոցարաի մանկությունը» (1879թ.)՝ կոմեդիա մեկ գործողությամբ, «Մեղեա» (1880թ.)՝ դրամա չորս գործողությամբ և այլն: Ներկայացումներից գույացած զուճարով մա ոչ միայն ընթերցարանի ծախսերն է հոգում, այլև դպրոցի զանազան պետքերը: Եվ երկու տարի Կ. Մելիք-Շահնազարյանն աշխատում է օրիորդաց դպրոցում. աշակերտության թիվը հասնում է վաթսուհին, ուսուցչական կազմը ընդլայնվում է, իսկ աշակերտուհիները հայերենի մեջ այնքան են առաջադիմում, որ նրանց գրած շարադրությունները Թիֆլիսի ուսուցչական համագումարում (1882թ.) հայտնի մանկավարժների զարմանքն են հարուցում: Հովմանյան դպրոցի մասնագետների կարծիքով երեք տարում Կ. Մելիք-Շահնազարյանի աշակերտուհիները հասել էին իրենց դպրոցի հինգերորդ դասարանցիների պատրաստվածության մակարդակին:

Թիֆլիսի ուսուցչական համագումարին Անդրկովկասի տարբեր քաղաքներից ու գյուղերից, նաև այլ հայաբնակ վայրերից մասնակցում էին երկու հարյուրից ավելի հայ փսրժապետներ ու վարժուհիներ: Համագումարը կազմակերպել էին մանկավարժներ Անդրակ Մանդինյանը, Առաքել Բահաթրյանը, «Մշակի», «Նոր-Դարի», «Արծազանքի» խմբագիրները՝ Գ. Արծրունին, Ա. Սպանդարյանը, Ա. Հովհաննիսյանը, Երևանի և Դարաբաղի թեմական դպրոցների տեսուչները, Ռ. Ադայանը, Պ. Պռոշյանը և այլ անվանի մանկավարժներ: Լսվում են դասախոսություններ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ: Կ. Մելիք-Շահնազարյանը ևս հանդես է գալիս դասախոսությամբ: Նա պատմում է հայոց լեզվի բուն դասընթացին անցնելուց առաջ իր կատարած նախապատրաստական աշխատանքների մասին, հայտնելով, որ ինքը շնորհակալությամբ կընդունի փորձառու մասնագետների դիտողությունները, որովհետև իր դասախոսության նպատակը ոչ թե սովորեցնելն է, այլ սովորելը: Դասախոսու-

թյան ավարտից հետո ուսուցիչների մեջ վեճաբանություն է սկսվում: Նրանց մի մակի կարծիքով Կ. Մելիք-Շահնազարյանը ձգձգել էի նախապատրաստական աշխատանքների փուլը, իսկ առավել փորձառուները հակառակն էին պնդում: Արդյունքներն ամփոփելով՝ Ս. Մանդինյանը նշում է, որ Դերբենդի Մարիամյան օրիորդաց դպրոցի աշակերտուհիների մայրենի լեզվից ձեռք բերած գիտելիքների մակարդակի թույլ է տալիս արդարացնելու Կ. Մելիք-Շահնազարյանի դասավանդման մեթոդը¹¹:

1882թ. հունիսի սկզբներին՝ Մարիամյան դպրոցի շրջանավարտներին վնայական հանձնելու օրը, Կ. Մելիք-Շահնազարյանը հրաժեշտ է տալիս աշակերտուհիներին և ուսուցչական կազմին: Նույն թվականին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնով նա տեղափոխվում է Թիֆլիսի Հովնանյան դպրոց:

XIX դարի վերջին տասնամյակներին հայ մշակույթն ու գրականությունը, դպրոցն ու տպագրական-հրատարակչական գործն առաջընթաց էին ապրում: Թիֆլիսում Մելիք-Շահնազարյանը մոտիկից ծանոթանում է ժամանակի առաջավոր մտավորականների հետ, դրսևորում իր ստեղծագործական կարողությունները՝ մասնավորապես երգիծանքի և հումորի ասպարեզում:

Մեկ տարի Հովնանյան դպրոցում ուսուցչություն անելուց հետո 1883թ. հունիսի 10-ին Կ. Մելիք-Շահնազարյանն իր չորսամյա պաշտոնավարության ընթացքում խմայած միջոցներով մեկնում է Ֆրանսիա և ընդունվում Սոնպելիեի նշանավոր երկրագործական րարծրագույն դպրոց՝ գյուղատնտեսական գիտելիքներ ստանալու նպատակով, «որի կարիքը ավելի անհրաժեշտ է, քան ուրիշ որևէ շահեկան առարկայի ուսումնասիրությունը, մանավանդ, որ մեզանում գյուղատնտեսությունը աչքաթող է արված և ամբողջ Կովկասում մինչև անգամ գյուղատնտեսական մի տարրական դպրոց անգամ չկա,

¹¹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք. 34:

և ժողովուրդը նահապետական շրջանից դուրս չի եկել»¹²:

Դեպի Ֆրանսիա կատարած ծովային ճանապարհորդության ընթացքում շոգենավը մեկերկու օրով կանգ է առնում Աև ծովի ափամերձ քաղաքներում՝ Սամսուն, Տրապիզոն, Կ. Պոլիս և այլն: Կ. Մելիք-Շահնագարյանը պատմում է Պոլսո թաղերում, տեսնում ռյուզանդական ժամանակներից մնացած պարիսպների, կայսերական պալատների, ձիարշավարանի ավերակները, ստորգետնյա ջրապահեստները, պաշտամունքային շենքերը, որոնց մեծ մասը թուրքերը վեր էին ածել մզկիթների: 1453թ. թուրքերը մզկիթի էին վերածել նաև Անթեմիոս Տրալսցու և Իսիդորոս Միլեթցու 532-537 թթ. կառուցած բյուզանդական ճարտարապետության նշանավոր հուշարձան Սոֆիայի տաճարը, որի՝ երկրաշարժից փլված արևմտյան մասն ու զմբեթը 989-ին վերակառուցել է հայ ճարտարապետ Տրդատը: Մելիք-Շահնագարյանը մտնում է «Այա Սոֆիա» հայտնի եկեղեցին, որ տաճիկները մզկիթի էին փոխել, ներսի նկարները ներկով ծածկել, փչացրել: Ներս մտնող քրիստոնյաների կոշիկները հանել էին տալիս, որ չլինի խոզի կաշվից լինի, հարամցնի մզկիթը¹³:

Ցուցանշական է հայ մշակութային և հանրային գործիչ Մարիամ Թումանյանի և Կ. Մելիք-Շահնագարյանի հիշողությունների ընդհանրությունը. «Հայերին խառնվ արգելված էի քաղաք իջնել... Ըստ հաստատված կանոնների՝ Այա Սոֆիա մտնողը պետք է հաներ իր ոտնամանները կամ նրանց վրայից փափուշներ հագներ... Աինչև օրս էլ չեմ մոռանում այդ հսկայական տաճարը՝ իր գեղեցիկ ճարտարապետությամբ և ներսի շատրվաններով: Ամեն տեղ թանկագին գորգեր էին փռված, որոնց վրա տեղ-տեղ չոքած էին տաճիկներ ու իրանց նամազն էին անում: Մենք ռարծրացանք և վերևի մասը, որտեղ ես նկատեցի խաչերի հետքեր պատերի

վրա: Թեև վիայից ներկած էր, բայց խաչերի գծագրությունները պարզ երևում էին»¹⁴:

Քսանվեցօրյա ծովային ճանապարհորդությունից հետո նա վերջապես ափ է իջնում Մարսելում, որտեղից մեկնում է Փարիզ, ուր և ծանոթանում է մի շարք հայերի հետ, մտերմանում բժշկական ֆակուլտետի ուսանող, շուշեցի Մկրտիչ Շահնուրայանի հետ: Այստեղ Մելիք-Շահնագարյանը տեղեկանում է, որ Մոնպելիեի ռարծրագույն գյուղատնտեսական դպրոցում կարող է ուսումնասիրել այգեգործություն, գինեգործություն, կաթնատնտեսություն և այլն: Հունիսին ընդունվելով այդ հաստատությունը, երկու ամիս ազատ լինելով՝ նա այցելում է Փարիզի տեսարժան վայրերը: Ռուսական եկեղեցում նա մասնակից է դառնում ռուս մեծ գրող Ի. Տուրգենևի հոգեհանգստի արարողությանը, շատերի հետ գրողի աճյունը ուղեկցում մինչև երկաթուղային կայարան, որտեղից այն փոխադրվելու էի Ռուսաստան:

1883թ. սեպտեմբերից սկսվում է Կ. Մելիք-Շահնագարյանի ուսումնառության շրջանը Մոնպելիեի բարձրագույն գյուղատնտեսական դպրոցում: Առաջին տարվա ուսումնական ծրագրին (բնագիտություն, ֆիզիկա, քիմիա, հաշվապահություն, մաթեմատիկա) ծանոթ լինելով՝ գործնական պարապմունքների համար ժամանակ չափելու նպատակով նա միանգամից անցնում է գյուղատնտեսական առարկաների ուսումնասիրությանը:

1883-1885թթ. Մելիք-Շահնագարյանը արտասահմանից նյութեր և հողվածներ է ուղարկում «Նոր-Դար» պարբերականին, որոնցում կարևորում է գյուղատնտեսության դերը ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Անդրկովկասում երկրագործական դպրոցների րացակայության պատճառով նա նպատակա-եարմար է գտնում հայ երիտասարդների ուսումնառությունը Մոնպելիեում: Այդ հողվածները որոշակի ազդեցություն են գործում, և շուտով այդ դպրոցում նոր ուսանողներ են հայտ-

¹² ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 198:

¹³ ԱՆՊ, գ. 177, թ. 35:

¹⁴ Թումանյան Մ., Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 234-236:

նվում. Գանձակից՝ Ստեփանյանը, Մալյանը, Վրաստանից՝ Սուլխանովը, Արևմտյան Հայաստանից՝ Գալֆայանը, Յուսուֆյանը, Ջալիֆյանը: Մոսկւայը կային ևս երկու հայ ուսանողներ, մեկը տաճկահայ էր, մյուսը՝ շուշեցի Դավոթ Լևստամյանը:

1884թ. նշված երիտասարդներին իր շուրջը համախմբելով՝ Մելիք-Շահնագարյանը ստեղծում է ուսանողական ընկերություն, որը պետք է նվիրվեր հայության տնտեսական զարգացման գործին: Նախատեսվում էր գյուղատնտեսական թերթի հրատարակություն: Գյուղացին որքան գիտությամբ զինված լինել և իրական կյանքի պայմաններին ու պահանջներին քաջատեղյակ, այնքան դյուրությամբ կկարողանար կարգավորել իր տնտեսությունը: Առանձին գյուղատնտեսական թերթ լույս ընծայելու անհրաժեշտությունը վերանում է, քանի որ և՛ «Նոր-Դարը» և՛ Մարսելի «Արմենիա» թերթը սիրով հրատարակում են Կ. Մելիք-Շահնագարյանի և ընկերության անդամների գյուղատնտեսական տարրեր խնդիրներին վերաբերող հոդվածները:

1884թ. Մոնպելիեում խոլերա է թռնկվում: Մելիք-Շահնագարյանը կարծում է, թե ինքն էլ է վարակվել: Ուսանող ընկերներով նա մի կարծ ժամանակամիջոց հանգրվանում է Շվեյցարիայում, որտեղ ուսումնասիրում է պանրագործությունը:

Ժնևում Մելիք-Շահնագարյանն այցելում է այդտեղ ապաստանած Ռուսաստանի հեղափոխական խմբակի գրասենյակն ու ընթերցարանը: Նույն թվականին նա մի խումբ կովեասցիների հետ անցնում է Լոզան և ճանապարհվում Սեն Բեռնարի վանքը: Ալայան սարերի ձյունապատ գագաթների և Սեն Բեռնարի վանականների նյութը նկարչության մասին իր տպավորությունները հետագայում շարադրում է «Ճանապարհորդական հիշողություններում»¹⁵: 1885թ. ֆրանսերենից փոխադրում է Վիկտորեան Ուարդուի «Ան մարգարիտը»¹⁶:

1884թ. օգոստոսի վերջերին Մելիք-Շահնագարյանը Ժնևից տեղափոխվում է Բոնն, որը մեծ հռչակ էր վայելում գինեգործության ընագավառում: Ժնևի իր հայ ընկերակցներից մեկի՝ Ս. Փիրումյանի հանձնարարական նամակով ներկայանում է գինեգործ Օգյուստ Բիլլեին, վերջինիս գինեգործական արտադրությունում անվճար աշխատելու և գործնական գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Մի քանի օր Մելիք-Շահնագարյանը ընթերցում է կատարում է իրեն հանձնարարված ծանր աշխատանքը: Հայտնի գինեգործը հետաքրքրվում է նրա՝ իր արտադրությունից ստացած տպավորությամբ և Կովեասում գինու պատրաստման եղանակներով: Կոնստանդինոյի Դերբենդի գինեգործության մասին երեսուն էջից բաղկացած (ֆրանսերեն) տեղեկագիր է ներկայացնում Բիլլեին՝ կցելով գինու պատրաստման ընթացքը պատկերող նկարներ: Նյութին ծանոթանալուց հետո Բիլլեին նրան ծանոթացնում է իր ընտանիքի անդամներին: Կ. Մելիք-Շահնագարյանը լինելով հանգիստ, շրջահայաց մարդ, ազնվականին վայել կեցվածքով, հավանաբար շարժում է Բիլլեի հետքերով: Իր անձի հանդեպ և նրա ընտանյակի վերաբերմունքը Մելիք-Շահնագարյանի նկատմամբ վերաճում է իսկական բարեկամության: Նա Կոնստանդինին ազատում է ծանր աշխատանքից, թույլ է տալիս ծանոթանալու գինիների գտման, տեսակների հատկությունները որոշելու գործընթացին, իսկ խաղողաքաղը սկսելուն պես իր ընտանիքի հետ նրան ուղարկում է Բոննի լեռնային մասում գտնվող ամառանոցը, որտեղ ապաստանվում էր խաղողի հյութը (շիրան): Մելիք-Շահնագարյանն այստեղ մոտիկից ծանոթանում է վազի մշակության եղանակներին և ամփոփելով իր ստացած տեղեկություններն ու տպավորությունները՝ հոդվածներ է տպագրում «Նոր-Դարում»:

1885թ. Կ. Մելիք-Շահնագարյանը և՛ դասախոսություններ է լսում, և՛ Բուրգունդիայի գինեգործական շրջաններն է ուսումնասիրում: Ֆրանսիայում, բացի խաղողի վազի մշակությունից, վազի հիվանդությունների դեմ պայ-

¹⁵ «Նոր-Դար», օրաթերթ, Թիֆլիս, 1886, №№ 67, 68:

¹⁶ Ամդ, 1885, № 147:

քարի միջոցներից և գինեգործությունից, նա ծանոթանում է սալիսի, օդու, գարեջրի ստացման գործնական եղանակներին, արտանկարում է վազի տարբեր տեսակների տերևներն ու ներկայացնում դրանց կազմաբանությունը*:

Բիլլոիի ամառանոցից վերադառնալով՝ Կոնստանդինը մեկուսանում է՝ բավարարվելով հաց ու թեյով. ապրուստի միջոցները սպառվել էին: Դերբենդում թողած իր վաստակած գումարից սնանկան երեսուն ուրբլին կանոնավոր չէր ստանում: Տանաիրոջից իմանալով, որ Մելիք-Շահնազարյանը դեռ Բոննում է և այլևս սեղանատնից չի օգտվում, Բիլլոին հասկանում է պատճառը և շտապ հեռագիր ուղարկում Դերբենդ՝ Մելիք-Շահնազարյանի քեռորդի Շահիջանյանին: Երևում է Բիլլոին ծանոթ էր «փող չունենալու հիվանդությունը» և հրաժեշտի պահին նա հասցնում է հարյուր ֆրանկանոց խցվել Կոնստանդինի ափը: Մինչ Մոնպելիե վերադառնալը՝ Բիլլոին նրան ստիպում է ճաշել և ընթրել իր ընտանիքի հետ: Այստեղ հյուրերն անպակաս էին և հետաքրքրվում էին Կովկասի մասին տեղեկություններով: Դերբենդից գումար ստանալուն պես նա փոստով վերադարձնում է Բիլլոիի պարտքը, որի համար հյուրընկալ օտարերկրացին իսկապես նեղանում է. «Իմ կյանքում այդպիսի մի բարյացական վերաբերմունք ես չէի տեսել ո՛չ իմ ազգականներից, և ո՛չ բարեկամներից», - երախտագիտությամբ մտորում էր Կ. Մելիք-Շահնազարյանը¹⁷: Վերադառնալով Կովկաս՝ նա մինչև 1900 թվականը նամակագրական կապ ուներ Բիլլոիի հետ¹⁸:

1885թ. հուլիսին ավարտելով ուսումը՝ Մելիք-Շահնազարյանը Մոնպելիեից ճանապարհվում է Կովկաս՝ կտրելով Արսեւ-Մոնակո-Մոնտե Կարլո-Նիցցա-Գենուա-Միլան-Ֆլորենցիա-Վենետիկ ճանապարհը, ապա՝ Վիեննա, Կրակով, Ռուսաստան: Օդեսայից՝ Սև ծովի ափամերձ բոլոր քաղաքները տեսնելով, մինչև Բա-

թում, որտեղից անցնում է Թիֆլիս, այնուհետև՝ Դերբենդ: Այսպիսով, ավարտելով ուսումնառության շրջանը՝ նա մտնում է իր կյանքի գործնական-գյուղատնտեսական բնագավառը և միաժամանակ շարունակում վերոհիշյալ թեմաներով զրույցներ տպագրել: Նրա կարծիքով «գինեգործության արհեստը որչափ արտաքուստ պարզ ու հասարակ է թվում, այնքան և ներքուստ այնպիսի մանրամասնություններ է ներկայացնում, որ եթե մեկն ու մեկը զանցառության տրվո, վնասում է ամբողջության»¹⁹:

Կ. Մելիք-Շահնազարյանի համոզմամբ «գինին մոտիկ ապագայում կովկասյան արդյունաբերությանց մեջ առաջավոր դեր պիտի խաղա, նա լավ ապագա ունի, կմնա մեզ այժմեւ իրացնելու միջոցների վկրա մտածել»²⁰: Նա մասնավորապես անդրադառնում է Դերբենդի գինեգործության եղանակի թերություններին.

ա) իաղողի չտեսակավորելը,

բ) շիրտան բացակայությունը,

գ) շիրայի եփի կտրվելը,

դ) ճաճից հեռացնելու ժամանակի սխալ ընտրությունը,

ե) տարաների պակասությունը²¹:

Կ. Մելիք-Շահնազարյանը նշանակալից ներդրում ունի Անդրկովկասում շերամապահության զարգացման ասպարեզում: «Ուղեցույց գործնական շերամապահության»²² գրքում նա իր անձնական դիտարկումներից բացի, առաջնորդվում է Մոնպելիեի գյուղատնտեսական դպրոցի պրոֆ. Մայոյի դասախոսություններով և Պաստորի, Գոբենի, Դյուրիեի, Բուլենուայի աշխատություններով:

1886թ. փետրվարին Կ. Մելիք-Շահնազարյանը դիմում է Կովկասյան գյուղատնտեսական ընկերությանը՝ աշխատանք ստանալու խնդրանքով: Ընկերության նախագահը նրան ուղարկում է փոխարքայի օգնական Ստարասելսկու տիկնոջ մոտ՝ վերջինիս Սագուրամոյի կալված-

* 1927թ. նաոհ տերևների պատկերներն ու կազմարանությունը Կ.Մելիք-Շահնազարյանը եւանձնում է ԵՊՀ-ին, ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք. 43:

¹⁷ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք. 43:

¹⁸ Անդ, գ. 176:

¹⁹ «Նոր-Ղար» օրաթերթ, 1886, № 12:

²⁰ Անդ, № 35:

²¹ Անդ, № 12:

²² Մելիք-Շահնազարյան Կ.Կ., Ուղեցույց գործնական շերամապահության, Թիֆլիս, 1890:

քում (Վրաստան), Մցխեթից վեց վերստ հեռավորության վրա՝ շերամապահության փորձ կատարելու: 1886թ. Անդրկովկասի շերամապահության մեջ առաջին անգամ Կ. Մելիք-Շահնազարյանն է մտցնում իտալական (Մոնպելիեից բերված), ֆրանսիական և Բադդադից բերված շերամի որդի սերմերի գործադրությունն ու մշակումը*: Մոնպելիեի 2 գրամ սերմից մա ստանում 9 ֆունտ խոշոր և ամենաընտիր թռչո՜: Փորձարկման արդյունքների մասին տպագրվում է մամուլում²³, իսկ ավելի ուշ՝ լույս է տեսնում առանձին գրքուկով²⁴:

1887թ. Աղդամում՝ հուլիսի 1-ին եղբայրների կալվածքում, իր ստացած թռչո՜ներից որակյալ սերմ պատրաստելով՝ Մելիք-Շահնազարյանը գործնականում հերքում է այն թյուր կարծիքը, թե շերամապահության հաջողությունը մեծ որդանոցի մեջ է: Իրականում հաջողության գրավականը հարմար դարակներում և անհրաժեշտ ջերմաստիճանում շերամի որդի ճիշտ խնամքն է*: Տեղի բնակիչներին շերամապահության պայմաններին ծանոթացնելու Մելիք-Շահնազարյանի առաջարկը սկզբում քամահրանքով է ընդունվում թուրք շերամապահների կողմից: Նրանք նորամուծություններ չէին ընդունում և համոզված էին, որ շերամապահությունը ավանդաբար պապերից փոխանցվել է իրենց: Երբ նրանց շերամի որդերը վարակվում են հիվանդություններով, իսկ Մելիք-Շահնազարյանի խնամած որդերը հավասարաչափ զարգանում են և մանավանդ վաղաժամ թռչո՜ պատրաստում, նրան դիմողները ստվարանում են, որոնց մա խորհուրդներ է տալիս շերամապահության գործում հաջողության հասնելու պայմանների մասին: Ստարասելսկայայի կալվածքում ստացած թռչո՜ները փորձարկելով Աղդամում՝ Մելիք-Շահնազարյանը Ղարաբաղում դնում է շերամապահության հիմքը: 1887թ.

հոկտեմբերին այդ թռչո՜ները ներկայացնելով Խարկովում ռացված գյուղատնտեսական ցուցաեանդեսին՝ մա արժանանում է թրոնգե մեդալի և գովեստանագրի²⁵:

1887թ. Դեբրենդում Մելիք-Շահնազարյանը մտցնում է վազի մշակության և գինեգործության մոր եղանակ՝ գոմադրով այգիների պարարտացում, վազերի լարանեցուկի ամրացում: Ֆրանսիայից բերել է տալիս խաղող ճգմող-չանչահանող մեքենաներ, որոնց մասին տեղացիները գաղափար անգամ չունեին և մինչև անգամ խեթ աչքով էին մայում այդ նորամուծությանը*: Նույն թվականին Շուշիում և Աղդամում մա գինի է պատրաստում՝ շիրան եփ տալու մոր եղանակով, վազի մոր այգիներ է տնկում: Երկու տարի հետո միայն հայտնի այգետերեր Կաչերգինը, Օրբելովը, Բարաևը սկսում են հետևել գինեգործության նրա օրինակին:

1888թ. Մելիք-Շահնազարյանը շերամապահության փորձն ընդարձակելու համար ընտրում է Բաքվի մահանգի Գեոքչա գավառի Չիյնի գյուղը, այնուհետև իր պահած որդերի թռչո՜ների սերմը ուղարկում Նուխի, Զաքաթալա, Օրդուբադ, Մեդրի, Արեշ և այլուր²⁶:

Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահվող ռազմաթիվ մամակները վկայում են, որ հասարակության տարրեր խավերի ներակայացուցիչներ հաճախակի են դիմել գյուղատնտեսին՝ թույլտվություն խնամքի, այգիների աճեցման, ցանքերի կատարման և ընդհանրապես հողից ռաբձր բերք ստանալու «գաղտնիքների» մասին տեղեկություններ ստանալու խնդրանքով: 1887թ. եուլիսի 28-ի թվակիր մամակում Ա. ճգնավորյանը դիմում է Մելիք-Շահնազարյանին՝ խնդրելով վերջինիս աջակցությունը սերմերը տեսակավորելու հարցում²⁷, իսկ «Մրագած» ժողովրդական լրագրի խմբագիր Զ. Միր-

* Մինչ այդ Կովկասում հայտնի էին միայն ճապոնական թռչո՜ները:

²³ «Նոր-Ղար», 1886, № 113:

²⁴ Մելիք-Շահնազարյան Կ. Կ., Ուղեցույց գործնական շերամապահության, Թիֆլիս, 1890:

* Մինչ այդ Ղարաբաղում շերամի որդերը փոխում էին գետինին, իսկ թթնու տերները՝ որդերի վրա, որի պատճառով մեծ կորուստներ էին լինում:

²⁵ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 45:

²⁶ Թուրք գյուղացիները այն կարծիքին էին, որ հողը գոմադրով պարարտացնելու պատճառով Շահնազարյանների գինուց գոմադրի հոտ սլիտի գա, իսկ նորամուծության ակնհայտ հաջողությունից հետո իրենք ևս սկսեցին հետևել նույն մեթոդին:

²⁷ «Նոր-Ղար», 1888, № 104, 105:

²⁸ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 144:

գոյանը գտնում է, որ գաղափարական պայքարի հաղթանակը կատարվելու է հենց մայր երկրում տառապող գյուղացիության և աշխատավորության անդուլ աշխատանքով և նրանց կարիքներով ու վշտերով տոգորված գավառական մտավորականության աջակցությամբ. «Դիմում ենք Ձեզ, որ Դուք մեզ աշխատակցեք ուղարկելով գլխավորապես գյուղատնտեսական հողվածներ»²⁸:

1887թ. Կ. Մելիք-Շահնազարյանը ամուսնանում է: Նրա կինը Սոֆյան, կրթված ու գարգացած անձնավորություն էր՝ այն ժամանակվա հայ կանանց միջավայրում հազվադեպ միջնակարգ կրթությամբ: Ամրողը կյանքում նա մնում է իր ամուսնու հավստարիմ ընկերն ու օգնականը՝ հաճախակի տեղափոխվելով նրա հետ շրջանից շրջան, քաղաքից քաղաք: Նրանք ունենում են վեց զավսկ, որոնցից ողջ են մնում երեքը՝ Թամարան, Մարիամը, Լևոնը:

1914թ. ապրիլի 13-ին «իր թանկագին կյանքի ընկեր Սոնյայի (տանը նրան այդպես էին անվանում) ծննդյան 50-ամյակի կապակցությամբ Մելիք-Շահնազարյանը նվիրում է սրտառուլ տողեր՝

*Անզուգական իմ ընկեր
Սրտիս միակ մխիթար,
Քսանյոթ տարի որ ինձ հետ
Լուծ քաշեցիր անդադար*²⁹:

1888թ. Մելիք-Շահնազարյանը շարունակում է իր գործնական-փորձարարական աշխատանքներն ու պրպտումները, իսկ 1889թ. գինեվաճառ Տեր-Մկրտչյանի հետ Բաքվից անցնելով Աշխարադ, Չարջուու, Սամարղանդ՝ ծանոթանում է տեղական գինեգործության պայմաններին: Վերադառնալով Բաքու՝ նա ծրագիր է կազմում, տակառներ պատվիրում և կրկին մեկնում Սամարղանդ՝ շամպայն ստանալու նպատակով քիչմիշ խաղողից անգույն գինի պատրաստում:

1889թ. Ռուսական կայսրության գյուղատնտեսական նախարար Երմոլովի րարեհաճու-

թյամբ, քաղաքային վարչության օժանդակությամբ և Կ. Մելիք-Շահնազարյանի եռանդուն ջանքերով Դերբենդում բացվում է այգեգործական և գինեգործական դպրոց: Շնորհավորանքի իր խոսքում Մելիք-Շահնազարյանը կոչ է անում ժողովիւփն բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել նորարաց դպրոցին՝ այգեգործությունը և գինեգործությունը համարելով տեղի բնակչության եկամտի միակ աղբյուրը³⁰:

1891թ. ազգականների օգնությամբ Մելիք-Շահնազարյանը գինու խանութ է բացում Բաքվում: Թեև նրա պատրաստած գինիները ընդունվում էին Պարսկաստանի շահի պալատում և անդրկովկասյան քաղաքներում, բայց խանութը վնասով աշխատելու հետևանքով փակվում է. րարծրորակ գինին մատչելի չէր շարքային գնորդներին: Բացի այդ, 1892թ. Բաքվում սկսված խուլերայի պատճառով նա ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս: Չկարողանալով անհրաժեշտ վերահսկողություն սահմանել՝ նա խանութը թողնում է գործակատարի տնօրինությանը:

1893թ. օգոստոսին, տասը տարով պայմանագիր կնքելով Ա. և Ս. Գյանջյանների հետ, նա ընտանիքով տեղավորվում է Շաքի կայարան՝ Գյանջյանների կալվածքը: Այստեղ Մելիք-Շահնազարյանը մնում է մինչև 1894թ. հունիսի վերջը և զարկ է տալիս վագի, րամբակի, հացարույսերի մշակությանը: Ազատ եղամասերը տրամադրում է գյուղացիներին և այդ եղանակով գործի գցում ջրաղացը, նոր ծառեր ու վագեր տնկում: Աշնանը որակյալ գինի և օդի է պատռաստում: Այդ տարին սպասվում էր րարծր եկամուտ: Կալվածատեր եղբայրներին սկսում է անհանգստացնել արդյունքը հավասար կիսելու պայմանագիրը և Մելիք-Շահնազարյանից ազատվելու նպատակով արհեստական խոչընդոտներ են ստեղծում (արգելում են գյուղատնտեսական մթերքներից օգտվել, մոծակներին քշելու համար աթար կամ թեփ վառել, խմելու ջուրն անգամ արգելքի տակ են պահում): Ավելին՝ ավազակներ են վսրծում, որ

²⁸ Ամդ, գ. 152:

²⁹ Ամդ, գ. 43, թ. 2:

³⁰ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 86, թ. 2:

նրան կողոպտեն: Նախօրոք տեղեկանալով այդ մասին՝ Մելիք-Շահնագարյանը կանխում է կո-
րուպտի փորձը: Աղդաշի պրիստավի միջնոր-
դությամբ արդյունքի մի մասը ստանալով՝ նա
ընտանիքով վերադառնում է Բաքու, իսկ այն-
տեղից էլ մեկնում Գանձակ: 1895թ. Գյանջյան
եղբայրների կծծիության վերաբերյալ նա գրում
է «Կովսն կալվածատերերը» (կոմեդիա մեկ
գործողությամբ, իրական կյանքից վերցրած)³¹:

1894թ. Գանձակում Մելիք-Շահնագարյանը,
Ա. Մալյանի խնդրանքով, խաղողի ընտիր տե-
սակներից 7000 դույլ գինի է պատրաստում և
250 դույլ օղի՝: Նա հաճախակի ժողովներ է
անում և այգետերերին բացաարում ընկերու-
թյուն ստեղծելու և գինեգործությունը զարգա-
ցման կանոնավոր կիմքերի վրա դնելու, համա-
տեղ ուժերով որակյալ գինի պատրաստելու և
Ռուսաստանում վաճառահանման շուկաներ
գտնելու անհրաժեշտությունը: Գանձակում քա-
ռասուն այգետերեր անդամագրվում են Մելիք-
Շահնագարյանի ստեղծած ընկերությանը, որի
կանոնադրությունը արժանանում է Կովեսայան
գյուղատնտեսական ընկերության հավանու-
թյանը:

1895թ. փետրվարի 14-ից մինչև մայիսի 7-ը
Մելիք-Շահնագարյանը այցելում է Ռուսաստա-
նի նշանավոր քաղաքները, գինեվեճառների
ժանոթացնում իր հետ վերցրած գինու նմուշ-
ների: Տեղեկանալով համապատասխան ֆիր-
մաների պահանջներին՝ նա իրացնում է այդ
տարվա պատրաստած 7000 դույլ գինին: Ուս-
կայն նրա ռացակայության ժամանակ, գործըն-
կերների անփութություն պատճառով պահես-
տավորված գինին փչանում է: Որոշ նշանավոր
այգետերեր դուրս են գալիս ընկերությունից:
Այս ամենից ելնելով՝ մի գանձակեցի մի օր
հումորով ասում է Մելիք-Շահնագարյանին. «Էդ
ինչե՞ր ես անում, երկու գյանջըցու գլուխները
վոր քցիս մին դագանի մեջ, նրանք մի տեղ եփ

չեն գյալ, տու քառասուն գլուխ ես քցել, հու՞նց
եփ կգա»³²:

Եվ այսպես սեփական միջոցների բացակա-
յության պատճառով Մելիք-Շահնագարյանը չի
կարողանում կանոնավոր հիմքերի վրա դնել
գինու արտադրությունն ու վաճառքը:

Գանձակում նա դասախոսություններ է կար-
դում գինեգործության, վագի մշակության մա-
սին, ինչպես նաև ներկայացումներ է կազմա-
կերպում ռարեգործական նպատակներով: Ժո-
ղովուրդը ռաժանված էր երկու կուսակցություն-
ների՝ հնչակյան, որ նոր դարականներն էին և
դաշնակցական, որ մշակականներն էին: Հն-
չակյանների հրավորած միջոցառումներին, թա-
տերական ներկայացումներին դաշնակցական-
ները չէին մասնակցում և հակառակը: «Նոր-
Դարին» շարունակ թղթակցելու համար Մելիք-
Շահնագարյանին հնչակյան էին համարում: Ի-
րականում, ինչպես ինքն է գրում ինքնակեն-
սագրականում, նա ոչ մի կուսակցության չի
անդամագրվել, սրայն ուժերի ներածին չափ
աջակցել է ամեն մի ռարենպատակ գործի³³:

Քաջ գիտակցելով, որ կուսակցությունների
անհանդուրժողականությունն ու թշնամանքը
պառակտում են ժողովողի հավաքական ոգին,
1896թ. Մելիք-Շահնագարյանը կոչով դիմում է
հայ գործիչներին. «Լկնտեղ ուր գործը հասա-
րակական է, պարոնայք գործիչներ, տեղ չափ-
տի ունենա քմահաճությունը, կապրիզը, եսը:
Հասարակաց ռարօրության համար հիմնար-
կություններում անձնական շահեր որոնողները,
օվսաննաներ ստանալու ձգտում ունեցողները
մուտք չպետք է ունենան: Երկու հակառակ ռա-
նակներ, երկու կուսակցություններ տեղ չափտի
ունենան այնպիսի գործում, ուր խնդիրը մար-
դասիրական, կարոտելի պետքերը լրացնելուն,
թշվառին, տնանկոն օգնելուն է վերաբերվում:
Գործ շատ կա կատարելու, պարոնայք գործիչ-
ներ: Գործեցեք, եթե ձեր մեջ ուժ եք գտնում:
Դատապարտելի է այն գործիչը, ով ուժ, միջոց
ունի ու չի գործում, ռայց գործեցեք անկեղծ,

³¹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 33:
* Մեկ դույլը Իավասար է 12 լիտրի:

³² ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, ք. 49:
³³ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, ք. 50:

գործեցեք առանց աղմուկի, գործեցեք ոչ թե աչքի ընկնելու, փառաբանվելու համար, այլ առաջ տանելու այն ատրք գործը, որի ամենափոքր առաջադիմությունն անգամ ոգևորում, գրավում է թե գործողին ու թե ժողովրդին: Մեր ժողովուրդը, պարոնայք գործիչներ ձեզ է հետևում. ձեր եռանդը, ձեր հորդորները, ձեր առաջ տարած ամեն մի աննշան գործն անգամ անհետևանք չի անցնում: Նա ևս ոգևորվում է ձեզ հետ, նա ևս կենդանություն է ստանում և երբեք չի խնայում յուր նյութական և բարոյական աջակցությունը, այնինչ ձեռն թուլությունը, գործին սառնասրտությամբ վերաբերվելը, ձեր նեղ հայացքներն ու միտումները տեսնելով՝ նա թուլանում է և կորցնում յուր հավատը դեպի ձեզ, որով և հասարակական գործն ըստինքյան թուլանում է ու կաղում:

Անցածը՝ անցած է: Հանուն մարդասիրության և եղբայրության, մենք համարձակվում ենք հրավեր կարդալ մեղ անկիղծ գործիչներին, ո՞ր բանակի, ո՞ր կուսակցության էլ որ պատկանելիս լինեն նրանք, միանալ, ընդհանուր ուժերով գործել այն ամեն հաստատություններում, որոնք այս ու այն անձի սեփականությունը չեն, այլ հասարակությանն են պատկանում և խոհեն, լուրջ ու անկեղծ կերպով առաջ տանել այն ատրք գործը, որի համար դեկավար են ընտրվում և որի համար պատասխանատու են թե՛ իրենց խղճի և թե՛ ժողովրդի առաջ»³⁴:

1896թ. սեպտեմբերին Մելիք-Շահնազարյանը ընդունելով շուշեցի թումանների առաջարկությունը՝ ստանձնում է Դեբեդենդից Պլստի-գորսկ տանող կայարանի մոտ զտնվող Մամեդ-Ղալա կալվածքի կառավարչի պաշտոնը: Կալվածքը, ի պատիվ թումանի դստեր, անվանակոչում է Սիրանուշավան և այստեղ առաջին անգամ մտցնում է ծխախոտի և բամբակի մշակությունը, ինչպես նաև երկաթե գութանի գործածությունը: Թուրք բնակչությունը գութանից վախեցած ընդոստանում է՝ ասելով, թե աստված նրան կպատժի: Երբ ցանած ցորենը ա-

ռատ բերք է տալիս, նրանք ասում են, որ աստված մոռացել է պատժել: Հաջորդ տարին բերքն ավելի առատ է լինում, և թուրքերը երկաթե գութան ձեռք բերելու խնդրանքով դիմում են Մելիք-Շահնազարյանին:

Այդ տարին վաղաժամ ցրտերի պատճառով բամբակի ցանքերը ցրտահարվում են, բայց ծխախոտի մշակությունը մեծ հաջողություն է ունենում: Ծխախոտը ըստ տեսակի և որակի վաճառվում է Բաքվի Միրզաբեկյանների գործարանին բարձր գներով (փոխը 8-15 ոտբլով): Այդ կալվածքը Մելիք-Շահնազարյանը կառավարում է երեք տարի: 1898թ. նրա ընտանիքի անդամները վարակվում են մալարիա հիվանդությամբ: Բժիշկ Վարդապետյանի խորհրդով նա տեղափոխվում է Բաքու, որտեղ և գործի է գցում թումանների խողովակների պատրաստման արհեստանոցը:

1900 թվականից մինչև 1901-ի օգոստոսը Մելիք-Շահնազարյանը թումանների տախտակեղենի պահեստի վարիչն էր, բայց նրան տանջում է այն միտքը, որ ծառ ու ծաղիկ աճեցնելու, գյուղատնտեսությամբ զբաղվելու փոխարեն՝ մալարիայից խուսափելու համար ստիպված է չոր փայտանյութ վաճառել:

1901թ. Մելիք-Շահնազարյանը նշանակվում է Արամյանցի Ալսթալայի և Լաչբադինի (Բորչալու) կալվածքների կառավարիչ: Ռիզայից և Օղեսսայից տնկիներ բերել տալով՝ նա Ախթալայում գցում է վեց դեսյատին պտղատու և մեկ դեսյատին խաղողի այգիներ: Այստեղ զարկ է տալիս մեղվաբուծությանը, շերամապահությանը, կաթնատնտեսությանը. սայլի ճանապարհ, ջրաղաց և ջրավազան է շինել տալիս: Լաչբադին կալվածքում նա առաջին անգամ մտցնում է բամբակի մշակությունը, հարան գետից առու է բերել տալիս և երկու գյուղերի բնակիչների համար աղբյուր շինում, որին գյուղացիք Մելիք-Շահնազարյանի պատվին «Շահնազար բուլաղի» անուն են տալիս: 1903թ. ուսեան՝ Ալ. Մանթաշովի կալվածքում նույնպես բամբակի մշակություն է սկսում: Նույն թվականին հացի պակասության պատճառով գյուղացիների մեծ

³⁴ Անդ, քք. 50, 50ա:

մասը սովի է մատնվում: Արամյանցի միջնորդությամբ Մելիք-Շահնազարյանը Թիֆլիսից մեկ վագոն ալյուր և Ղարաբաղից մեկ վագոն սերմացու ցորեն է բերել տալիս և ռաժանում սովի մատնված գյուղացիներին: Արտասահմանից և Ռուսաստանից նա հնձող, կալսող մեքենաներ է պատվիրում, ձեռնարկում ֆրանսիական եղանակով պանրի, կարագի արտադրությունը, գործի է գցում ալյուրի երկու գործարան, թուրք երեխաների համար դպրոց է բացում՝ ապահովելով աշակերտներին գրեմական պիտույքներով և անձամբ վճարելով ուսուցչի ամսավարձը:

Արամյանցի կալվածքը մի իսկական ռաբեգործական հիմնարկություն էր: Նրա վե սան և ծանոթ որսորդներն ու զինվորականները երեք-չորս օրով այստեղ որսի էին գալիս. կալվածքը ընդ որ հարմարություններն ուներ հյուրընկալելու համար: 1903թ. Ռիգայի գյուղատնտեսական ինստիտուտից երեք ուսանող է ժամանում Մելիք-Շահնազարյանի մոտ գործնական պարամունքներ անցկացնելու և ատենախոսություն պատրաստելու նպատակով: Գալիս են նաև Թիֆլիսի այգեգործական դպրոցի աշակերտները, որոնց համար Մելիք-Շահնազարյանը դասախոսություններ էր կարդում գյուղատնտեսական թեմաներով:

1903թ. Արամյանցի գրասենյակի կտոավարիչ Ս. Արրահամյանը աշխատանքից ազատում է Ախթալայի կալվածքի վարիչ Ա. Դիլանյանին, ով ռանիմաց անձնավորություն էր և ուներ անչտփահաս երեխաներ: Հանդես գալով Դիլանյանի շահերի պաշտպանությամբ՝ Մելիք-Շահնազարյանն ընդհարվում է Արրահամյանի հետ: Վերջինս օգտվելով Արամյանցի ռացակայությունից՝ ռանսարկությունների միջոցով ազատում է նաև Մելիք-Շահնազարյանին: Այդ ամայի լեռնաստանը կենդանացնելուց հետո՝ 1903թ. տարեվերջին, նա Արամյանցին ուղղված նամակ-րացատրության մեջ խոցված ինքնասիրությամբ գրում է. «Լիխալել Օսիպիչ, մի կարծեք որ ես ցավում եմ նրա համար, թե կկորցնեմ իմ պաշտոնը, նյութապես կվմասվեմ

և ընտանիքս քաղցած կմնա. ամենևին ոչ: Ես ցավում եմ նրա համար, թե ինչու այսքան փչացած է մեր կյանքը, ինչքան դեռ ստոր ենք, որ վառարանում ենք կեղծիքը, անիրավությունները, լրբերին ու ամբարտապաններին փայփայում, հավատարիմ ու գործունյա անձանց ոտնատակ տալիս: Լա առաջին օրինակը չէ և վերջինն էլ չի լինելու: Լինում է ինձ ցավել, թե ինչի ես էլ անագնիվ չեմ ծնված և ընդունակ չեմ մարդասիրությամբ պարապելու, գուցե այն ժամանակ ինձ ավելի զնահատեին, ես էլ ավելի ապահով վիճակ ունենայի, և այդ զգացումը ինձ չէր տանջի»³⁵:

1904թ. Եվլախի շրջանում՝ Թադիկի կալվածքում, Մելիք-Շահնազարյանը շուշեցի Մ. Շահմուրադյանի հետ ռամրակի մշակության առաջին վործն է անում: Նախապես հողը վարել են տալիս, ռամրակի հինգ տեսակի սերմ ցանում: Բույսը լավ աճում է՝ ըրերկրանք պատճառելով մտերիմ ընկերներին: Ցավոք, մորեխը խժոժում է ամեն ինչ: Հունիսի 16-ին, երբ հուսահատ Մ. Շահմուրադյանը քնած էր Եվլախի ընկարանում, Մելիք-Շահնազարյանն ընկերոջը մի երկարաշունչ ոտանավոր է նվիրում, որտեղ հումորով նկարագրում է Եվլախում իրենց կրած չարչարանքը, ակնկալիքների և դառն իրականության հակադրությունը.

*Քնիր հանգիստ տանջված ընկեր
Ջալիկի սենյակում,
Թող մի րոպե գրի առնեն.
Երկուսիս կյանք Եվլախում...
Ամենայն օր մեծ նեղությամբ
Գնում էինք տնտղում,
Թե ինչպես է մեր քամբակը
Օրըստօրե քարծրանում:
Ամռան շոգը մեզ թվում էր
Սարի զեփյուռ, անուշ հով,
Մոծակների տգվգոցը
Քաղցրահնչյուն երգ խմբով:
Սուրճ, կակաո կամ շոկոլադ
Ո՞վ էր տվել Եվլախում,
Չայդանով չայ, գլիի ջրեր
Սեր խմածն էր օրն ի բուն:*

³⁵ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 59:

*Գնաց կորավ մեր աշխատանք,
Մի ժամվա մեջ փչացավ,
Մեր բամբակի հետքը անգամ
Իսպառ կորավ չքացավ:*

Պարզվում է, որ անգամ հուսախաբ լինելուց հետո Մելիք-Շահնազարյանը չի ընկճվել.

*Քանի ուժ կա պիտի կռվեմ,
Եվ չեմ քաշվի կես ծամփից³⁶:*

1904թ. վերջերին Արամյանցը Մելիք-Շահնազարյանին տեղեկացնում է դրամական չարաշահումների պատճառով Ս. Աբրահամյանին պաշտոնից արձակելու մասին և կրկին հրավիրում է նրան կառավարելու Լաչրադինի կալվածքը: Ի պատասխան Մելիք-Շահնազարյանի պայմանագիրը իրավաբանորեն ձևակերպելու առաջարկին, Արամյանցը գրում է. «Եթե մենք միմյանց չգնահատենք, մեր շահերը համերաշխ չլինեն, ոչ մի թուղթ մեզ կապել չի կարող» և խորհուրդ է տալիս իրեն ծանաչելով հանդերձ, անել այնպես, ինչպես իր սիրտն ու զգացմունքն է թելադրում ³⁷:

Տեղափոխվելով Լաչբադինի կալվածք՝ Մելիք-Շահնազարյանը սկսում է նոր թափով աշխատել: Ապարանից և Հայաստանի այլ շրջաններից տեղափոխված գյուղացիներին հարմար պայմաններով հողարածիմներ է տրամադրում, կարգավորում է այն ամենը, ինչ իր բացակայության ժամանակ խաթարվել էր, ընդլայնում ռամրակի մշակությունը:

Սակայն վրա է հասնում 1905 թվականը: Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժման արձագանքը հասնում է նաև Անդրկովկաս: Կառավարական սադրանքի պատճառով Բաքվում, Երևանում, Շուշիում և այլուր պարարտ հող է ստեղծվում թուրք-թաթարական ազգայնամուլ տարրերի կրքերը բողբոջելու համար:

1905թ. վերջերին Վրաստանում և ապա Հայաստանում տարածվում է կոտորածների ալիքը: Իրենց «առաջնորդների» հեղինակությունն անվերապահորեն ընդունող հետամնաց թուրք-թաթարները հեշտությամբ ենթարկվում են հա-

րևան հայերի վրա հարձակվելու. նրանց թալանելու կոչերին: Խաղաղ աշխատանքով զբաղված հայ բնակչությունը անակնկալ հարձակումների առաջին օրերին անպատրաստ լինելով՝ ռավականին զոհեր է տալիս: Այնուհետև հայերը կազմակերպված դիմադրության շնորհիվ զգալի կիրուստներ են պատճառում նախահարձակ ամրոխին: Այդ ժանր օրերին Կ. Մելիք-Շահնազարյանը գնացքով ուղևորվում է Թիֆլիս՝ իմանալու իրողությունը: Հենց Թիֆլիսի կայարանում ծանոթներից մեկը հանդիպելով նրան՝ զարմացած բացականչում է. «Վահ՝, սա՞ղ ես պրծել, էդ ինչ ռախտավոր ես»: Եվ ի պատասխան Մելիք-Շահնազարյանի անտեղյակության՝ ավելացնում է. «Բա՛ս, չես իմանում, որ գնացքով եկող հայերին թուրքերը կոտորում են»³⁸:

Մի քանի օր անց Մելիք-Շահնազարյանն ու Ալսթալայի կալվածքի կառավարիչը, մի խումբ կազակների ուղեկցությամբ վերադառնալով Լաչրադին, տեսնում են՝ շինությունները ավերած, զույքը, անասունները, ցորենի ու գարու պահեստները թալանված: Միայն այգու ծառերն էին մնացել կանգուն. հավանաբար թուրքերը հիշել են, որ այգին ապրուստի աղբյուր է:

Նոյեմբերի 22-30-ը Բորչալուի շրջանում թուրքերը թալանում ու հրի են մատնում Արամյանցի, Մանթաշովի, Միրզոյանի, Ենիկոլոպյանի, Վարդապետյանի, Պիտոնի, Մելիքովի և այլոց կալվածքները: Իշխանությունների փորձը՝ վերադարձնելու թալանված ինչքը, հանդիպում է թուրքերի կողմից զինված դիմադրության: Ստեղծված իրավիճակում Մելիք-Շահնազարյանը ստիպված է լինում թողնել Լաչբադինը:

1905-1906 թթ. հայ-թուրքական զինված ընդհարումների հետևանքով ավերված տնտեսությունների ճակատագրով խորապես մտահոգված՝ նա մամակով դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին: Նամակում ժողովրդի տնտեսական ծանր վիճակը Մելիք-Շահնազարյանը բացատրում է գյուղատնտեսությունը հետամնաց մեթոդներով վարելու

³⁶ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 53:

³⁷ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 63:

³⁸ Անդ, թ. 65:

հանգամանքով և պատրաստակամություն է հայտնում ընդհարումներից վնասված էջմիածնի կալվածքը ուժերի ներածին չափ կարգի բերելու և ագարակ-դպրոցի վերածելու գործում. «Էջմիածինը իբրև եայության սիրտ, իրրև հայոց լուսավորության կենտրոն մախածեռնող պիտի հանդիսանա և առայժմ եթե անկարող է առանձին գյուղատնտեսության դասընթաց րանալու, գոնե դյուրություն պիտի տա ճեմարանի սաներին, գյուղական ուսուցիչներին ու էջմիածին հաճախող ուխտավորներին գործնականապես ծանոթանալու գյուղատնտեսության այն ճյուղերի հետ, որոնք առաջնակարգ տեղ են ընդունում մեր Կովկասում և մեր գյուղական տարրի ապագան ապահովելու միակ փրկարար միջոցն են կազմում:

Նվաստիս կարծիքով, էջմիածինը իր ձեռքի տակ ունենալով խաղողի այգիներ, հացարույների, բամբակի ու ձիթատու բույսերի վարելահողեր, տավար ու թեմիներ, առանց մեծ ծախսոց կարող է բարեկարգ վիճակի մեջ դնել այդ ամեն ճյուղերը, մի կողմից վանքի պետքերին գոհացում տալով, մյուս կողմից գիտության ու փորձերի վրա հիմնված մի ագարակ՝ իրրև վարժոց ծառայեցնելով ճեմարանի սանաց, գյուղական ուսուցիչներին և հետքերով ու հասարակության»³⁹:

Հատկանշական է կաթողիկոսին ուղղված նամակում՝ Կ. Մելիք-Շահնազարյանի արտահայտած մտահոգությունների և ազգագրագետ Ստ. Լիսիցյանի տվյալ ժամանակահատվածին վերաբերող դիտարկումների ընդհանրությունը. «Արտագնաց գյուղացիները քաղաքային սովորություններ էին մտցնում դարարադյան գյուղ: Փովովությունն ամենից առաջ արտաքին, կենցաղային էր: Արտագնացության ամենից ավելի տարածված շրջաններում՝ Դիզակում և Վարանդայում, մասամբ նաև ներքին Խաչենում գյուղերն արդեն փոխել էին իրենց պատկերը, հագուստի կահ-կարասու մեջ նկատվում էին ռուսական նորամուծություններ, իսկ գվարձանքներում հստակորեն երևում էի քաղա-

քային ճաշակը՝ ավելի ցայտուն դարձնելով հին աշխարհընկալման քայքայումը: Սակայն տնտեսական կյանքում այդ ազդեցությունը գրեթե չէր արտահայտվում՝ ոչ հացամշակությունը, ոչ այգեգործությունը, ոչ անասնապահությունը և ոչ էլ կաթնատնտեսությունը նոր ձևեր չէին յուրացնում: Եվ դա լրիվ հասկանալի է. տարագնացները քաղաքում բացառապես տեղավորվում էին առևտրաարդյունաբերական կամ զուտ քաղաքային ձեռնարկություններում, ուստի և ընդունվում էին հարստացնում իրենց գյուղատնտեսական վտորդը»⁴⁰:

1906թ. հունվարի սկզբին Կ. Մելիք-Շահնազարյանն այցելում է Թիֆլիսում գտնվող Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանին: Վեհափառը առաջարկում է ամմիջապես գնալ էջմիածին. «Հա՛ առ դուն ես, դե գնա անկուրիմդ առ, գնա էջմիածին, քո տեղը հոն է»⁴¹:

Այսպիսով՝ 1906թ. հունվարին, Խրիմյան Հայրիկի հրավերով և Սինոդի հետ կնքած հինգ տարվա պայմանագրով, Մելիք-Շահնազարյանը վանքապատկան կալվածքների կառավարչի պաշտոնով տեղավորվում է էջմիածին:

Խրիմյան Հայրիկի պատվերով Մելիք-Շահնազարյանը կազմում է «Տեղեկագիր Ս. Էջմիածնի գյուղատնտեսական բաժնի»⁴², որտեղ ներկայացնում է 1906 թվականից իր խնամքին հանձնված էջմիածնի ընդարձակ կալվածքների, այգիների և ագարակի մասին իր դիտողությունները և բարեկարգման ուղիները: Առաջին հերթին նա բարձրացնում է Արագածից, Խաթունարիսից, Այդր լճից ջուր հասցնելու և վանքապատկան հողերի ոռոգման հարցը: Զուրմ այն առանցքն է, որի շուրջը պտտվում են տնտեսության բարգավաճումն ու բարեկեցությունը: Ամեն մի բարի ծագում, մշակված ծրագիր, աշխատանք, դրամագլուխ ապարդյուն կանցնի էջմիածնում, եթե կալվածքը ջրով չապահովվի:

⁴⁰ *Հիսիցյան Սա.*, Լեռնային Ղարաբաղի հայերը. - Հայ ազգագրություն և բանահյուսություն, (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 12, Երևան, 1981, էջ 31:

⁴¹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, թ. 70:

⁴² *Մելիք-Շահնազարյան Կ.Կ.*, Տեղեկագիր Ս. Էջմիածնի գյուղատնտեսական բաժնի, Վաղարշապատ, 1908:

³⁹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 107, թթ. 1-2:

4. Մելիք-Շահնազարյանը մեծ տեղ է տալիս առուների մաքրմանն ու կանոնավորմանը, անտառի վերականգնմանն ու չափավոր օգտագործմանը, վազի և բամբակի կենտրոնացված մշակությամբ, հողի պարարտացմանն ու խնամքին, գյուղատնտեսական նորագույն գործիքների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերմանը: Վանքի տնտեսությունը գտնվում է բարձրիժողի վիճակում, գույքը, շինությունները կարող են ընդհանրապես: Լինուշադրության են մատնված աշխատողների կենցաղային, տարրական պայմանները, իսպառ բացակայում է հաշվառումը, տնտեսությունը աշխատում է վնասով:

Տնտեսության մեջ կարգ ու կանոն մտցնելու և արդյունքները ճիշտ հաշվարկելու նպատակով Մելիք-Շահնազարյանը վճար է նշանակում միարանության համար բաց թողնված մթերքների դիմաց, որի պատճառով լաքվում են հարերությունները նրա և Սինոդի անդամների միջև: Դժգոհություն է առաջացնում նրա կողմից այգիների վերահսկողության սահմանում, որովհետև Սինոդի անդամները գրկվում են կիսազնով հողերը իրենց ընդհանրապես կապալով տալու հնարավորությունից: Պակաս դեր չի խաղում նաև հնձող, կախող մեքենաների մուտքը ազարակ, որը բացառում է ցորենի յուրացման հնարավորությունը⁴³:

Մասնագետ-գյուղատնտեսին դիմելու անհրաժեշտությունը այնքան մեծ է եղել, որ անժանոթ լինելու հանգամանքը չի խանգարել մարդկանց՝ իրենց հետաքրքրող բազում հարցերով դիմելու 4. Մելիք-Շահնազարյանին⁴⁴:

1907թ. զնած նամակում Հովսեփ քահանան մի խումբ գյուղացիների անունից տեղեկություններ է խնդրում գյուղատնտեսական նոր տիպի գործիքների և դրանց օգտագործման եղանակների մասին, հույս հայտնելով, որ մի օր գոնե կազառվեն նախնադարյան գործիքների գործածությունից. «Ուստի սորանով խնդրում

եմ ներդրություն կրեք ինձ հայտնելու, թե ո՞ր սիստեմի գութանը ավելի ամուր է և թեթև 3-4 գույզ եզների համար...»⁴⁵:

1908թ. «Ռուսահայերի գյուղատնտեսության վիճակը և գյուղատնտեսական դպրոցների կարիքը» գրքույկում Մելիք-Շահնազարյանը շարադրում է իր տեսակետն այն մասին, թե ով պետք է հարթի ժողովրդի՝ դեպի տնտեսական բարգավաճում տանող ճանապարհը: Պատասխանը միանշանակ է՝ գյուղատնտեսական դպրոցը: «Մեր Կովկասը, որ իր հողային և կլիմայական պայմանների շնորհիվ ուրիշների նախանձն է շարժում և ախորժակը գրգռում, նկատում է նա, իր հարազատ զավակների համար խորթ մոր դեր է կատարում և շատերը փախուստ են տալիս նրանից. ժամանակն է վերջապես աշխատել գյուղատնտեսական տարրական գիտելիքները ընդհանրացնել մեր ժողովրդի մեջ, ժամանակն է, որ գյուղական տարրական դպրոցները լուրջ գրեթե կարգալ չսովորեցնեն գյուղացի երեխային, այլ գիրք ու գրչի հետ՝ քահ ու քիչ, մանգաղ ու գեղանդի, արոր ու գութան բանեցնելը, ծանոթացնեն նրան շերամապահության, մեղվապահության, այգեգործության և մյուս ճյուղերի հետ... Ահա այդ ժամանակ դպրոցը իր արժանավոր տեղը կրոներ գյուղացու աչքում, նա իր վերջին կոպեկը չէր խնայիլ նրա բարեկարգության և պահպանության, ինչի որ նրա մեջ կգտնե իր ապագա նեցուկը, իր տնտեսական վիճակի բարվոքման հենակետը»⁴⁶:

Դպրոցի դերի բարձրացումը, մասնագիտական կողմնորոշումը կենսական հարց է դառնում մեր ժողովրդի համար, բայց ցարական կառավարության հակահակական գործողությունները թունավորում են Մկրտիչ Խրիմյանի կյանքի վերջին տարիները: Փակվում են ազգային դպրոցները, թմնագրավվում է հայ եկեղեցու գույքը: Հայրիկը հերոսաբար մաքառում է հակահակական ձեռնարկումների դեմ: Հա-

⁴³ Մելիք-Շահնազարյան Կ.Կ., Տեղեկագիր Ա.Էմիհանի գյուղատնտեսական ընթերցման, 1908, էջ 27:

⁴⁴ ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ.160, 173:

⁴⁵ Ամր, գ. 159:

⁴⁶ Մելիք-Շահնազարյան Կ.Կ., Ռուսահայերի գյուղատնտեսության վիճակը և գյուղատնտեսական դպրոցների կարիքը, Վաղարշապատ, 1908, էջ 13:

սարակական-քաղաքական ծանր պայմաններում 1907թ. խրիմյան Հայրիկը վախճանվում է:

4. Մելիք-Շահնազարյանի կարծիքով մեզանում շատ անգամ է խոսվել ժողովրդի տնտեսական դրությունը բարելավելու մասին, իայց «ազգի նորընտիր Հայրապետին» է վիճակված գլուխ կանգնել էջմիածնի ուսուցչանոցի ձեռնարկության, կոչ անել մեր ռամիմաց հասարակությանն ու հաստատություններին, օր առաջ նրա դռները բանալ, որպեսզի հայ ուսանողը, նրա մեջ գիտությամբ զինվելով՝ կարողանա գյուղական ժողովրդին իր խորհրդով, բանիվ ու գործով առաջնորդել, ուղիղ ճանապարհի վիա դնել նրա քայքայված տնտեսությունը և նրան սիրել տալ մայր հողը, որ նրա գոյութուն կռվի միակ հենակետն է, նրա ռարեկեցության միակ ուղիղ ճանապարհը»⁴⁷:

Նյութական միջոցների սղության պայմաններում Մելիք-Շահնազարյանն առաջարկում է գործելու առավել արդյունավետ մեթոդներ. գյուղատնտեսական ուսուցչանոց, շրջիկ-գյուղատնտես ուսուցիչներ, գյուղատնտեսական մասնագիտական դասընթացներ, օրինակելի ազարակներ, փորձնական դաշտեր ու կայաններ, գյուղատնտեսական թերթեր ու հրատարակություններ, ցուցահանդեսներ: Ահա գործելու մի ամրոջ ասպարեզ, որ մեզանում ուշադրության չի արժանացել և դրանց ռացակայության պատճառով անջրպետ է բացվել մեր և արևմտյան ազգերի գյուղատնտեսության մեջ:

1907թ. էջմիածնում գրադարան-ընթերցարան հիմնելով՝ Մելիք-Շահնազարյանը գյուղատնտեսական գիտելիքներ է տարածում այնտեղ: Նա գրադարան է բացում նաև Հայաստանի սահմաններից դուրս: Ուշագրավ է Ռիգայի «Սևան» ուսանողական հայկական ընկերության նամակը, որից տեղեկանում ենք ընկերության 1909թ. ապրիլի 13-ի նիստում ընդունված որոշման մասին. «խորին շնորհակալու-

թյուն հայտնել 4. Մելիք-Շահնազարյանին ընկերության գրադարանի հարստացմանը աջակցելու համար»⁴⁸:

1908թ. նոյեմբերի 30-ի թվակիր նամակում Վահան վարդապետը նույնպես խրախուսում է գյուղատնտեսական դպրոց ռացելու 4. Մելիք-Շահնազարյանի նախաձեռնությունը. «Էն քու գյուղատնտեսական պիծի գիրդ» էլ կրթեցե, դե շատ ուն կըրթըլական, լւմվ գրալ ըս, լօխ էլ հարկավոր պան ա, որ անող ինի, ամմա դե հո՞ր ա, հո՞ւ ա անում, ինձ տո՛, քեզ տամ»⁴⁹: Վահան վարդապետը համոզված է, որ եթե աստծո կամոք գյուղատնտեսական դպրոց բացվի, վաստակաշատ գյուղատնտեսը չի գլանա իր գիտելիքներն ու հմտությունն ի սպաս դնել այդ կարևոր նպատակի իրականացման համար, քանզի իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է գյուղացու չարքաշ վիճակը կարելվույն չափ թեթևացնելու գործին⁵⁰:

4. Մելիք-Շահնազարյանի երկրպագուները, անգամ հոգևոր այրերից ոմանք, հարկ են համարում վերջինիս հետ ռաժանել իրենց մտահոգությունը՝ կապված նորընտիր կաթողիկոսի գործունեության հետ: Վերոհիշյալ նամակում Վահան վարդապետը հարցնում է. «Խելքտ հի՞նչ ա կտրում, խաչան ապեր, նոր ջոկած կաթողիկոսը կը կարե մին պան շինի. կը կարե սելին ռեխը ետ տա. տեսնում չըս, սել ա՛, մեծ սել, որ հին պաները լօխ առաջին ռրած քշած սրրած տանում ա»⁵¹:

Մինչ 4. Մելիք-Շահնազարյանն էջմիածնում տնտեսությունն արմատապես բարեփոխելու ծրագիր է մշակում՝ մթնոլորտը շիկանում է այն աստիճան, որ Սինոդի որոշ անդամներ անվտառություն են հայտնում կալվածքների կառավարչի նկատմամբ, նրա գործունեությունը համարում անարդյունավետ՝ գերադասելով տն-

* Նկատի ունի Մկրտիչ խրիմյանին հաջորդած Գևորգ Ե Տփղիսեցի Սուրենյանց (1847-1930) կաթողիկոսին:

⁴⁷ Մելիք-Շահնազարյան 4.4. Ուսահայերի գյուղատնտեսության վիճակը և գյուղատնտեսական դպրոցների կարիքը, էջ 53:

⁴⁸ ԳԱԹ, 4.4. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 162:

* խոսքը վերաբերում է 4. Մելիք-Շահնազարյանի «Ուսահայերի գյուղատնտեսության վիճակը և գյուղատնտեսական դպրոցների կարիքը» աշխատությանը, Վաղարշապատ, 1908:

⁴⁹ ԳԱԹ, 4.4. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 169:

⁵⁰ Անդ:

⁵¹ Անդ:

տեսությունը վարելու իրենց իմացած եղանակը: 1909թ. մարտի 21-ին Սինոդից նա ստանում է հետևյալ հրամանը. «Այսպիսով Սինոդի անդամ Մատթեոս վարդապետի գեկուցումը, որով ապացուցվում է ձեր գործունեության անշահավետությունը և դրամների անկանոն վատնումը, Սինոդը ժամանակավորապես դադարեցնելով ձեզ պաշտոնավարությունից՝ առաջադրում է հանձնել վանական կառավարության, Մատթեոս վարդապետի ներկայությամբ, ագարակի բոլոր գույքը և անասնեղենը, ավելացնելով, որ դրամական հաշիվների մասին առանձին գեկուցում կլինի, ձեզնից բացատրություն կպահանջվի և ըստ այնմ էլ տնօրինություն կարվի»⁵²:

Կ. Մելիք-Շահնագարյանը գրավոր բողոքում է Սինոդին, որ առանց հիմնավոր փաստերի իր տնտեսական գործունեությունը անշահավետ է համարվում: Մատթեոս վարդապետը հրապարակ է հանում նրա կողմից դրամական գեղծում կատարելու վարկածը: Մելիք-Շահնագարյանը պահանջում է հրապարակորեն քննել իր կառավարած կառվածքի դրամական հաշիվները և պարզվում է, որ նա անմեղ է: Սինոդականները թյուրիմացության մեջ են գցում նույնիսկ Դաշնակցությանը, թե իբր վանքապատկան Զնծանափոսի և Դուլակի անջրդի հողերն էջմիածնի Սինոդը վճռել է հատկացնել ժողովրդին ողպես այգետեղ, բայց Մելիք-Շահնագարյանն արգելք է լինում դրան: Դաշնակցության և ժողովրդի հետ բացատրվելու նպատակով վերջինս բաց նամակ է հղում վաղարշապատցիներին, ուր մասնավորապես ասվում է, որ իր իրավասությունից դուրս է հողաբաժանության և նման խնդիրներ լուծելը: Սինոդը կարող է իրեն դիմել հողերն ավելի արդյունավետ օգտագործելու մասին խորհուրդ ստանալու նպատակով: Եվ ինքն, իրոք այդ մասին թե՛ գրավոր և թե՛ բանավոր հաղորդել է իր կարծիքը որպես պաշտոնյա⁵³: Թե առհասարակ ինչպես է պատկերացնում հողային խնդիրները, ինչպիսի ծրա-

գրեր է կազմել, որ այդ հարցում թե ժողովրդի շահերը պաշտպանված լինեն և թե՛ էջմիածնի՝ նա ավելորդ է համարում մանրամասնությունների մեջ մտնել, միայն առաջարկում է կրկին զբաղվել ջրի հարցով, մասնագետ ու ձեռնհաս անձանց միջոցով վերջնականապես պարզել այդ խնդիրը և բավարարություն տալ եթե ոչ ապագա, գոնե ներկա պահանջներին⁵⁴:

Կ. Մելիք-Շահնագարյանի պաշտոնանկության թեման երկար ժամանակ շահարկվում է Մատթեոս վարդապետի կողմից: 1911թ. նա «Սուրհանդակում» գրում է, թե իբր «Սինոդը չկամենալով իսպառ վարկագուրկ անել Կ. Մելիք-Շահնագարյանին դատարանին մատնելով, որոշեց փակել նրա հաշիվը՝ կազմելով համաձայնություն:

1. Բարոյական ոեաբիլիտացիա Կ. Մելիք-Շահնագարյանին.

2. Բոլոր դրամական հաշիվները վերջացրած համարել.

3. Վճարել պրն. Կ. Մելիք-Շահնագարյանին 1000 ռուբլի.

4. Զետ տալ պահեստի փողը (մոտ 600 ռուբլի) ոռճիկոց հետ պահած գումարը.

5. Տպարանի պարտքը ոչնչացնել և բոլոր գրքերը տալ Կ. Մելիք-Շահնագարյանին.

6. Այդ մասին հրատարակել թերթերում ի գիտություն և տալ եռամյա գործունեության վեալական»⁵⁵:

Ի պատասխան Մատթեոս վարդապետի վարկաբեկիչ հրապարակման՝ Մելիք-Շահնագարյանն իր վրդովմունքն է հայտնում մամուլում: Նա վաղդապետից բացատրություն է պահանջում Սինոդին ներկայացրած իր վաստարկները անհետևանք թողնելու և մինչև նորընտիր կաթողիկոսի ժամանումը տվյալ հարցը ամեն գնով վիակելու առթիվ: «Չէ՛ որ ինքը ոչ մի խնամիական կապ չուներ Սինոդի անդամների հետ, որոնք վաղուց աաամներ էին կրճտացնում իր վրա և լուն ուղտ շինած՝ իրենք էլ վրան

⁵² «Աշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1909, № 69:

⁵³ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, թթ. 1-2:

⁵⁴ Մելիք-Շահնագարյան Կ. Կ., Տեղեկագիր Ս. էջմիածնի գյուղատնտեսական բաժնի, էջ 17:

⁵⁵ «Սուրհանդակ», օրաթերթ, Թիֆլիս, 1911, № 259:

նստած, ամեն մի չնչին բան Աիմողում խնդիր չինած՝ իրենից թացատրություն պահանջում:

Այո՛, Էջմիածնի գլխին խաղեր շատ են խաղացել, բայց ոչ գյուղատնտեսները, այլ շահամուլ և ամեն բան իրենց անձնականին ծառայեցնող, կեղծարար և խարդախ վարդապետները»⁵⁶:

Հավանաբար այս տխուր տպավորությունների ազդեցությամբ է ծնվել «Ձուռնայի» րավական պերճախոս հեռագիրը.

«Էջմիածին. *** - իմ: Բա իմ պեժի՜նը...»⁵⁷:

Անտարակույս, այս ամենին քաջատեղյակ էր Վրթանես Փափազյանը, երբ իր «Պատմություն հայոց գրականության» աշխատության մեջ, արժևորելով Տմբլաչի Խաչանի գրական, մանկավարժական և գյուղատնտեսական գործունեությունը, հարկ է համարում նշել. «Ուղղամիտ ու զգայուն գրողը երկար չկարողացավ դիմանալ վանական գծուծ դավերին. տեսնելով թուր իր քանքերի ապարդյունությունը՝ հեռացավ»⁵⁸:

Ծայրաստիճան լարված մթնոլորտում Կ. Մելիք-Շահնազարյանը կարողանում է ստեղծագործել: 1907-1908թթ. մամուլի տեղեկություններից հայտնի է դառնում, որ Էջմիածնում նա թարգմանել և տպագրության է պատրաստել Զայկովսկու «Մաքառողներ», Վերրիցկու «Պատրանք» կոմեդիաները և գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեի «Ռայներե Ադվես» պոեմը:

1909թ. Մելիք-Շահնազարյանը ստանձնում է Դ. Ավան-Յուզբաշյանին պատկանող Թարթառի և Լենքորանի կալվածքների կառավարչի պաշտոնը (եվլախ կայարանից 42 վերստ հեռավորության վրա): Կարճ ժամանակում նա վերականգնում է հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ավերված կալվածքները, Թարթառ գետից ջուր րարծրացնելով՝ լուծում է գյուղացիներին ջրով ապահովելու հարցը և րարենպաստ կլիմայական պայմանների շնորհիվ մր-

գատու ծառերի ընդարձակ այգի է զգում: Նույն թվականին նա գյուղատնտեսական աշխատանքի հրավեր է ստանում նաև Թեհրանից⁵⁹:

1910-1917թթ. Կ. Մելիք-Շահնազարյանը Պ.Օ. Ղուկասովո կալվածքի կառավարիչն էր Ղուսարչայում, ուր առաջին անգամ մտցնում է րամրակի և ծխախոտի մշակությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների գործածությունը: Միաժամանակ շարունակում է մամուլում հրատարակել ոչ միայն տեսական-մասնագիտական հոդվածներ ու թարգմանություններ, այլև ֆելիետոններ ու թարգմանություններ: Նրա թղթակցություններին ընթերցողը սպասում էր անհամբերությամբ:

1911թ. օգոստոսի 31-ին Ջավեն վարդապետը Մելիք-Շահնազարյանին գրում է. «Աիրելի հայրենակից, ով չգիտե, որ մեր սիրելի հայրենիքի, գեղեցիկ Ղարարաղի շահերը քո սրտին խիստ մոտ են: Չեմ կասկածում, որ քո սիրտը ուրախ կրարախի, եթե ասեմ, որ այդ սիրածոր հայրենիքի շահերին ու առաջադիմությանը նկիրված մի հայերեն «Ղարարաղ» անունով թերթի հրատարակության հիմք են դրել, որի առաջին համարը լույս կտեսնի սեպտեմբերին: Ավելորդ եմ համարում ասել, որ հենց առաջին համարում փայլելու է մեր հայրենիքի հարազատ գավակը և հայ գրականության մեջ յուր պատվավոր տեղը ընդհանրապես թողնողի սիրելին, մեր Տմբլաչին՝ իր գեղեցիկ ֆելիետոնով...»⁶⁰:

Շուշիից հեռու՝ Ղուսարչայում, Կ. Մելիք-Շահնազարյանը արձագանքում է մամուլին. «Ես հույս օնիմ, վեր էտ կազեթըն մեր Ղարարաղին ահվալաթը կիրելավ, ընդրա խերն ու շառը լուս աշխարհի ընկնելավ, ըշխարքավե մին շաղ եկած Ղարարաղցիք էնքան մամուս կունենան, վեր թողել չըն էտ ասլան-րալասոց երգիրը անտեր անտիրական մնա, ղեյրաթ կանին վերը փողավ, վերը րարի կիրծավ, վերը խորհուրթավ, վեր մին դուլալ ուսումն ու արհեստը ձեռք ձեռքի տված առաջ քինա, պտկի, ծաղկի, մյուս դուլավ սեր պարեկամությունը, մին մինու թաւիր քաշելը ամեն տեղ պյուն տինի ... մեր էտ

⁵⁶ «Աուրհանդակ», օրաթերթ, Թիֆլիս, 1911, № 263:

⁵⁷ Տմբլաչի Խաչան, Ձուռնա-Տմբլա, գ. Ա, Վաղարշապատ, 1907, էջ 107:

⁵⁸ Փափազյան Վ., Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1911, էջ 623:

⁵⁹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 154:

⁶⁰ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 133:

ըշխարքա կտրված երգիրն էլ լուսավոր երգիրներին ջյարգն ընկնի, ազատ շունչ քաշի:

Ուրան վթանան դյաղարգյուն ընգած Տմբլաջի հաջան»⁶¹:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջման լուրն Անդրկովկասում միանշանակ չի ընդունվում: Առաջացած անիշխանության պայմաններում սանձազերծված թուրք ազգայնական տարրերը դարձյալ կոտորածների նոր օջախներ են ստեղծում: Պ.Օ. Ղուկասովի Ղուսարչայի կալվածքը թալանվում ու հրի է մատնվում, և նա տեղափոխվում է Ֆրանսիա: Ստեղծված իրավիճակում Կ. Մելիք-Շահնազարյանն ու իր ընտանիքը հայտնվում են ծանր կացության մեջ:

1918թ. Մելիք-Շահնազարյանը նշանակվում է Բաքվի և Շրջանի գյուղատնտես: Հողագործության ժողովողական կոմիսարիատում հաճախակի ժողովներ էրն տեղի ունենում գյուղատնտեսներ Բաշինջառյանի, Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ, ծրագրեր էրն կազմվում Մուղանի դաշտավայրի տնտեսությունը բարեկարգելու, բանրակագործությունը կանոնավոր հիմքերի վրա ղեկելու ուղղությամբ: Այդ ժողովներին մասնակցում էր նաև Կովկասյան գործերի ժամանակավոր աքտակաբ գյուղատնտես Ստ. Շահումյանը:

1918թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը ազգայնամուլ խաժամուժի ուղեկցությամբ գրավում են Բաքուն: Այդ ներխուժումից երեք ժամ առաջ Կ. Մելիք-Շահնազարյանը հագիվ է կարողանում իր զավակներին փրկել Բաքվի հայտնի ջարդերից. «Օռվափին իբարանցում էր, շոգենավում տեղ չկար, թոհուրոնի մեջ միմյանց հրելով՝ ձգում էրն ծովը: Հարյուրավոր գնդացիներ կրակ էրն թափում քաղաքի վրա», - հիշում էր նա⁶²:

Կորցնելով իր ողջ ունեցվածքը՝ Կ. Մելիք-Շահնազարյանը մի կերպ շոգենավ է խցկվում, մի մարդ, ով 1885-ից սկսած իր ողջ գիտակցական կյանքը նվիրել էր Անդրկովկասի ժողովուրդներին՝ անդադրում շրջելով երկրամասի

մի ծայրից մյուսը, մտահոգված նրանց բարեկեցության, տնտեսական ու մտավոր զարգացման խնդիրներով:

«Միակ բանը, որ հիշում եմք,-ասում էր նրա ղուստրը՝ Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Թամարա Մելիք-Շահնազարյանը,-մի ճամպրուկ էր՝ հորս ձեռագրերով, որոնք նա հրաշքով անցկացրեց հրդեհի միջով, Կասպից ծովի վրայով և մեզ՝ երեխաներիս հետ միասին կարողացավ փրկել»⁶³:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներն Կ. Մելիք-Շահնազարյանը Երևանում էր: 1919թ. սեպտեմբերին նշանակվելով Երևանի գավառի գյուղատնտես՝ ուսումնասիրում է տեղական հողային և կլիմայական պայմանները՝ պարզելու, թե որ շրջանում գյուղատնտեսության որ ճյուղերի զարգացմանը առավելություն տալ: 1920թ. նա գյուղատնտեսական լայն գործունեություն է ծավալում Բաշ-Գյառնիում (Գառնի), Կոտայքում, Վեդիում և այլուր: 1921թ. խաղողի վազի և պտղատու ծառերի այգիներ է գցում Մխթալայում: 1922թ. Չարբախում, իսկ 1924-ին Կոտայքում և Չազի տնտեսությունում առաջին անգամ մտցնում է ծխախոտի մշակությունը: Չազում գյուղատնտեսը շերամապահության փորձ է անում և գյուղերից եկած դպրոցականներին բացատրում այս բնագավառում հաջողության հասնելու պայմանները: Նրանց ծանոթացնում է նաև կաթնատնտեսության զործիքներին և գործնականում գյուղատնտեսական մթերքներ պատրաստելու եղանակներին: Նա նշանակալից ավանդ է ներդնում հանրապետության գյուղատնտեսության զարգացման բնագավառում: Այդ տարիներին Կ. Մելիք-Շահնազարյանը հաճախ է հանդես գալիս «Մաճկալ», «Գյուղատնտես», «Գյուղատնտեսական կյանք» և այլ պարբերականներում:

⁶³ «Հայրենիքի օայն», շաբաթաթերթ, Երևան, 1990, № 40:

* 1921թ. *Մխթալայում* Կ. Մելիք-Շահնազարյանի հետ կատարվում է մի զավեշական դեպք: Խառոտի եասունացած ընթրից գինի և օղի պատրաստելու նպատակով Երևանի «Արարատ» գործարանից տակառներ ու շշեր ստանալով՝ նա վերադառնում է Մխթալա ու տեսնում, որ իր

⁶¹ Անդ, գ. 312:

⁶² ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք. 84:

1920-21թթ. սոցիոլոգիական հետազոտություն կատարելու նպատակով բաժանված հարցաթերթիկում, կուսակցական պատկանելության դիմաց Մելիք-Շահնագարյանը լրացնում է՝ հողային կուսակցություն և պատճառաբանում է, որ գյուղատնտեսությամբ զբաղվողը գործ պիտի ունենա միայն հողի հետ, կոիվ մդի այն ամենի դեմ, ինչը վնասում է մայր հողին:

1885-ից սկսած նրան հանգիստ չի տալիս գյուղատնտեսական դպրոց բացելու գաղափարը: Թե՛ Էջմիածնում, թե՛ Լաչբադիում, թե՛ Բաշ-Գյառնիում նա մեծ ջանքեր է գործադրում իր նպատակին հասնելու համար: Ամեն անգամ այս կամ այն կալվածքի կառավարումը ստանձնելիս, այդպիսի դպրոց հիմնելու նպատակով, փորձում է տարածք ու շինանյութ հայթայթել, դիմում է համապատասխան կազմակերպություններին ու ազդեցիկ մարդկանց, թայց, ցավաք, նյիրական ցանկությունը չի իրականացնում:

Անդրկովկասի հայկական մամուլում ընթերցողը ծանոթանում է Կ. Մելիք-Շահնագարյանի հոդվածներին ու լրագրային տարրեր ժանրի նյութերին՝ գրված պարզ ու հասկանալի լեզվով, աշխատավոր ժողովրդի ապահովության ու քարեկեցության խոր մտահոգությամբ⁶⁴:

րացակայությամբ ընթերցողը ամրագրվին գողացվել է: Կատարվածի մասին հայտնում է իրավապահ մարմիններին, և մի քանի օր անց Ալավերդու Ներքին գործերի բաժնից շտապ կանչում են նրան: Բաժնի պետը ղապելով՝ միջոցներին պատվիրում է Մելիք-Շահնագարյանին տանել Ջալալօղլի (այժմ՝ Սաեփանավան): Նա, վերջինիս իր եսկություն տակ պահելով, առավոտյան ուղիով ճամփա է ընկնում՝ եարցուփործ անողներին ասելով, թե ընկածը է տանում: Երկար քաշքշուկից եետո Մելիք-Շահնագարյանը քննիչի մոտ մտնելու թույլտվություն է առանում: Նրա հարցին, թե որն է իր կրած նվաստացումների՝ որպես ընկածի ոտքով Ալավերդուց Ջալալօղլի ընկնելու դրդապատճառները, քննիչը հանգիստ պատասխանում է, որ նրան կանչել են իր գրած դիմումի առնչությամբ րացաարություն տալու:

Մինչ ընտանիքը մեծ անհանգստությամբ սպասում էր Մելիք-Շահնագարյանին, նա երեք օր այս ու այն գյուղում կանգ է առնում, մոտիկից ծանոթանում տնտեսության վիճակին, խորհուրդներ է տալիս գյուղացիներին և գյուղաանաեսական թեմաներով գրույցներ կազմակերպում... (ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 177, թթ. 90 - 91):
⁶⁴ Մելիք-Շահնագարյան Կ.Կ., Ռուսահայերի գյուղատնտեսության վիճակը և գյուղատնտեսական դպրոցների կարիքը, էջ 2:

Կոլտնտեսային շառժման տարիներին (1928-33թթ.) «Բատրակ» շաբաթաթերթի էջերում տպագրած հոդվածներում «Գյուղատնտեսի գրույցներից գարնանացանի մակին», «Կոլեկտիվ գործ բոնեցեք» և այլն Մելիք-Շահնագարյանը դարերով իր հողակտորին գանված գյուղացուն հորդորում է րաժանվել սեփականատիրական անցյալից, միավորվել կոլտնտեսություններում և ապրել նոր սկզբունքներով՝ համայնական հոգեբանությամբ⁶⁵:

Ժամանակին մամուլը մեծ գովեստով է խոսել Կ. Մելիք-Շահնագարյանի մասին: Սոանծին պարբերականներ նրա 50-ամյա գրական-հասարակական և 40-ամյա գյուղատնտեսական գործունեության առթիվ իրավացիորեն նշել են, որ նա ժամանակի աչքի ընկնող գրողներից ու ֆելիետոնիստներից է, գիտնական-գյուղատնտես, ով իր եռանդն ու ընդունակություններն ամմնացորդ նվիրել է մայր ժողովրդին: Գյուղատնտեսության վերաբերյալ առաջին անգամ հայերեն գիրքը գրվել է Կոնստանդին Մելիք-Շահնագարյանի կողմից⁶⁶: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմիտեի 1924թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ Կ.Կ. Մելիք-Շահնագարյանին շնորհվել է Հայաստանի վաստակավոր գյուղատնտեսի կոչում⁶⁷: Նույն թվականին, ի պատիվ նրա գիտական-հանրային գործունեության հորեյանի, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում սահմանվել է նրա անվան ուսանողական երկու կրթաթոշակ:

1924թ. դեկտեմբերի 4-ին Մելիք-Շահնագարյանին ուղղված շնորհավորական նամակում մասնագիտությամբ գյուղատնտես, հայ գրականության նվիրյալ Ակսել Բակունցը գրում է. «Գյուղացուց մեջ անմիջական աշխատանք տանելու ընթացքում է ավելի շատ գգացվում, թե որքան հալալ ու արդյունավետ գործ է գյուղատնտեսական աշխատանքը: Այդ կերպ՝ Ձեր րագմամյա գյուղատնտեսական գործունեու-

⁶⁵ «Բատրակ», շաբաթաթերթ, Երևան, 1929, №№ 9,11:

⁶⁶ «Կարմիր ուղար», գյուղացիական թերթ, Գորիս, 1924, դեկտեմբերի 3:

⁶⁷ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 235:

թյունը ստանում է անկեղծ հարգանք նրանց կողմից, որոնք այսօր էլ մեր մութ գյուղերում մոր խոսք են ասում, մոր ձև ուսուցում: Հեռավոր Զանգեզուրից ընդունեք մեր անկեղծ շնորհավորանքը...»⁶⁸: Նույն օրը Բակունցի՝ գյուղվարչությանը ուղղված գրությունը տեղեկացնում է, որ գավազուղատնտեսի մախաձեռնությամբ կազմված է հանձնաժողով՝ տոնելու գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանի գրական ու գյուղատնտեսական գործունեության հորեյանը: Դեկտեմբերի 14-ին կտրվի երեկույթ գրական-գեղարվեստական ընկերությանը: «Կարմիր ռաշաբարում» զետեղվելու է հողված այդ մասին: Նաև խնդրում է նկարներ և գյուղատնտեսական գրքեր ուղարկել այդ օրը սպառելու համար⁶⁹: Հորեյանական միստը, իրոք, կայացել է դեկտեմբերի 14-ին: Կ. Մելիք-Շահնազարյանի գյուղատնտեսական գործունեության մասին զեկուցել է Ա. Բակունցը: Զեկուցման ընթացքում չի պահպանվել⁷⁰:

1924թ. դեկտեմբերի 3-ին Գորիսի «Կարմիր ռաշաբար» թերթում տպագրվել է մի հայտարարություն Աելիք-Շահնազարյանի՝ ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի գանազան վայրերում կայանալիք հորեյանի մասին, որի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Ակսել Բակունցն էր:

Հայտնի է, որ Բակունցն իրեն գյուղատնտես, ակնածանքով է վերաբերվել Կ. Մելիք-Շահնազարյանի ժառանգությանը և գրախոսել է վերջինիս հրատարակած երկու գրքույկները՝ «Ծխախոտի մշակություն»՝ ու «Կտավատը և կանեփը»⁷¹: Բակունցի կարծիքով այս անգամ էլ Կ. Մելիք-Շահնազարյանին հաջողվել է ծխախոտի մշակման մասին գործնական խորհուրդներ

տալ⁷¹, իսկ «Կտավատը և կանեփը» «լավ է կազմված, լեզուն մատչելի է, նյութի դասավորությունը՝ հաջող: Ցանկալի էր գրքույկում տեսնել մի փոքրիկ ակնարկ այն մասին, թե ինչ հաջողություններ ունեն ռուսական այն գյուղերը, որոնք կոլեկտիվ ձևով են վերամշակում կտավատն ու կանեփը»⁷²:

1924թ. դեկտեմբերի 17-ին Տմրլաչի հաշանի հորեյանը տոնելիս ուսանողները նրան ձեռքերի վրա տնից տանում են մինչև դահլիճ: Դա անկեղծ հարգանքի տուրք էր այն մարդուն, ով իր գիտելիքները, հոգեկան կարողությունները ամենացորդ նվիրել էր ժողովրդին:

Մամուլը այդ հորեյանը համարում է հազվագեյ երևույթ, որովհետև շատ գյուղատնտեսներ մի քանի տարի աշխատելով գավառում, ապահով ու բարեկեցիկ կյանք ստեղծելով՝ քաղաքներում նավթահորեր ու գործարաններ են գնում, հարստության ու դիրքի են հասնում, իսկ «փառքի երեսին քացի տվող» Կ. Մելիք-Շահնազարյան-Տմրլաչի հաշանը կես դար անշահախնդիր գործել է գյուղում, գավառում՝ իր սիրելի գյուղացու սրտին ու մտքին մոտիկ: Ո՞վ գիտե, շատերն էլ, ովքեր այդ մարդուն չեն ճանաչում, կկարծեն թե լոկ ապրուստի համար է դրանով պարապել: Թեպետև յոթանասուն տարեկան, ընդհանուր առմամբ էլի երկար կգործի թեթևացնելով գյուղացու կյանքը, ապրուստի եղանակը: Մոտ կես դար գրեց հողի մասին, ապրեց գյուղացու հետ. նրա հետ լաց եղավ, նրա հետ խնդաց, նրա հետ սարսափեց «մորեխի», «տավարախի» արհավիրքների ուրվականի առաջ կանգ առած. «Կովկասի ի՞նչ տեղն ասես չի եղել այդ մարդը: Էլ Վրաստանի գյուղերը, էլ Ղուրայի գավառ, էլ Արեշի գավառ, էլ Բորչալու, էլ Ղարաբաղ, էլ Էջմիածին ... ո՞ր մեկն ասեմ, - գրում է «Զուռնա» շաբաթաթերթի խմբագիր Սիմոն Հովվյանը: Բայց լինելը հորավական չէ: Ո՞վ է Կ. Մելիք-Շահնազարյանի պես աղքատ, չարքաշ, գյուղացու հետ իրեն իրեն հավասար եղորդ հետ արտը, այգին զնա-

⁶⁸ Բակունց Ա., Երկեր, հ. IV, Երևան, 1984, էջ 372:

⁶⁹ Անդ, էջ 406-407:

⁷⁰ Անդ, էջ 617:

* Տպագրվել է «Գյուղատնտեսական կյանք»(ԳԿ) ամսագրի 1925, № 6, հունիս, էջ 63, «Գրախոսական» թափում, Ա. Բ. ստորագրությամբ: Բակունցի երկերի IV ետադրում արտատպվել է նույն ամսագրից:

** Տպագրվել է ԳԿ, 1926, № 24, ապրիլ, էջ 48-49, «Գրախոսական» թափում, Ա. Բ. ստորագրությամբ: Արտատպվել է նույն ամսագրից:

⁷¹ Բակունց Ա., Երկեր, հ. IV, Երևան, 1984, էջ 167:

⁷² Անդ, էջ 200:

ցել, պարզ, հասարակ ձևով սովորեցրել, թե ինչպես պետք է ցանել, հնձել, կալսել, խաղողի վազերը խնամել, գինի պատրաստել, շերամի որդը պահել, պահպանել, մետաքս գործել և այլն և այլն: ... Եվ այս բոլորը այնպիսի համեստությամբ, որ շատ գյուղատնտեսներ կնախանձեին նրան»⁷³:

Յուրօրինակ խանդավառությամբ Տմբլաչի խաչանին չափածո շնորհավորանք է հղել խնկր Ասկերը.

*Է՛յ քան, է՛յ քան,
Տմբլաչի խաչան.
«Պրազդնիկ է» քո քուչում,
Տմբլա-գուռնա են փչում:
Հիսուն տարին կլորած՝
Քո մեծ պարն է՝ բլուրորած,
Դու ես պարի պարբաշին
Դեհ, թոհ, թռչենք հինգ արշին:
Դեհ, ընկերներ, տաշ, տուշի,
Սեր տմբլաչուն ալ փուշի
Տմբլա տալու սովոր է
Հորեյար է, թագվոր է:
Տմբլա - տմբլա - Տմբլաչի,
Փլավ եփի, խամբաջի.
Էսոր ունենք փեսատես,
Փեսա չկա փեսիդ պես:
Ցանած սերմը լավ աճել,
Բաղ ու բաղջան կանաչել.
Բաղիդ մատաղ փեսա քան,
Դարտակ մախմուր, քիսա քան:
Օհլ ծաղիկդ է քո չորս դին,
Դեհ կոստկոստա Կոնստանդին,
Ընդհանուրիս Տմբլաչի,
Տմբլադ գնաց, էլ գալ չի՞⁷⁴:*

Այս կենսուրախ շնորհավորանքին հաջորդում են երկրագործության ընագավառում Կ. Մելիք-Շահնազարյանի երկարամյա անխոնջ աշխատանքը գնահատող, ծանրակշիռ ելույթներ, ուր դրվատվում է գյուղատնտեսական գիտելիքները հողագործներին փոխանցելու նրա մշտական ձգտումը: Հորեյանական հանձնա-

ժողովի անունից հանդես եկող Ա. Թադևոսյանը իր խոսքում նշում է, որ չարքաշ, գրկանքներով, երբեմն նաև հալածանքներով լի նրա կյանքի ամեն մի ելևեղը ներշնչված է անսահման գործով դեպի մեր հյուսիսած գյուղացիությունը⁷⁵: Իսկ Լայպցիգում ռարժրագույն կրթություն ստացած գյուղատնտես, հասարակական գործիչ և հրատարակիչ Ա. Աթանապանի (Մալ-Ման) կարծիքով Կ. Մելիք-Շահնազարյանի գրական գործունեության ամենաշոշափելի արդյունքներից մեկը պետք է համարել այն, որ նա տարեցտարի մշակել է հայերեն լեզվով գյուղատնտեսական տերմինների, տեխնիկական հասկացությունների հարուստ բառապաշար, որից օգտվում ենք առանց իմանալու, որ մեծ ճիգ ու ջանք է գործադրվել այդ ամենը ժողովելու, ստեղծելու և գործադրելու համար: Շնորհիվ նրա այդօրինակ գործունեության և եռանդուն ընթացիկության, հարյուրավեր ու հազարավոր այգեգործներ, գինեգործներ, շերամապահներ ուսանել և կատարելագործվել են նրա ձեռնարկներով, հարյուրավոր երկրագործներ անձամբ նրանից սովորել են գյուղատնտեսական նորագույն ձևերի գործադրությունը մեր պայմաններում, և երբ այսօր մեր գյուղատնտեսական գործադրական ձևերի մեջ նկատվում են առաջադիմության և կատարելագործության ուրուշ շոշափելի մշաններ, դրանով մենք ոչ պակաս պարտական ենք Կ. Մելիք-Շահնազարյանի քառասնամյա անդուլ և համառ գործունեությանը: Պատահական չէ, որ 1922թ. համահայաստանյան առաջին գյուղատնտեսական համագումարը նրան մեծարեց՝ ընտրելով իր պատվավոր անդամ⁷⁶:

Հորեյանական երեկոյին Գավգործկոմը Մելիք-Շահնազարյանին մի այգի է տրամադրում ցմահ*: Նա նաև խորհրդանշական հուշանվեր է

⁷³ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 234:

⁷⁴ Անդ, գ. 181:

* Դեռևս 1921թ. Կ. Մելիք-Շահնազարյանին և գյուղատնտես Գրիգոր Աղամայանին որոշ պայմաններով մի լքյալ այգի են տրամադրում Նորագյուղում (հինգ դեսյատին մակերեսով): Շուտով նրանց են կցում մախկին արենդատոր Ալեք Ֆրանկյանին, որն էլ իր հետ բերում է իր եղորմ ու քրոջ որդուն: Հայտնվում է նաև այգու մախկին կառավա-

⁷³ «Մաճկալ», գյուղացիական թերթ, Երևան, 1924, № 161:

⁷⁴ «Մաճկալ», գյուղացիական թերթ, Երևան, 1924, № 161:

ստանում. մի պահպանակ՝ զարդարված արծաթե գութանի և պտուղների դրոշմաքանդակներով: Բազմաթիվ շնորհավորական հեռագրեր են ստացվում հարևան հանրապետություններից, ինչպես նաև Դադստանից, Ջանգեզուրից, Լեոնային Ղարաբաղից, Ռիզայից, Աստրախանից և այլ վայրերից:

Անդրկովկասյան մամուլը լայնորեն արծազանքում է Մելիք-Շահնազարյանի հորեյսական հանդիսությանը: Գնահատության խոսքի հետ մեկտեղ անդրադառնում է նաև նվերներին. իբրև նրան տուն են նվիրել, այգի, մի արծաթե գութան, մի կառք իր ձիերով և այլն: Այս չափազանցված լուրերը շատերին հիմք են տալիս կարծելու, թե Մելիք-Շահնազարյանը նյութապես ապահովված՝ անցնելու է վաստակած հանգստի: Ի դեպ հորեյսական հանդիսությունը նախատեսվում էր 1924թ. ապրիլին: Հորեյսարը ծախսի տակ ընկնելով՝ հագուստ է գնում այդ օրվա համար, մինչդեռ միջոցառումը կայանում է մի քանի անգամ հետաձգվելուց հետո՝ դեկտեմբերի 17-ին: Սա առիթ է դառնում որպեսզի Տմբլաչի խաչանը ֆելիետոնով դիմի «հորեյսանը կատարող հանձնաժողովին»⁷⁷:

Լսելով մայիս ամսվա մեջ նշվելիք հորեյսական տոնակատարության մասին, հավուր

րիչ Գրիգոր խաչատրյանը: Հաճախակի շրջաններում լինելով՝ Մելիք-Շահնազարյանը չի հասցնում հետևել այգու, լսել վերոհիշյալ անձինք այգին տնօրինում են ըստ իրենց շահերի: Եվ քանի որ այգին ձևակերպված էր Մելիք-Շահնազարյանի անունով, Հողժողովում ընդ որ կարգի հարկերը՝ եկամտահարկ, այգեհարկ, միասնական տուրք և այլն պահանջում էր նրանից, գտնելով, որ վերջինս դատարանի միջոցով կարող է ստանալ ընկերների փոխարեն վճարած գումարը: 1923թ. տվյալներով Մելիք-Շահնազարյանը պարտավոր էր վճարել 135 փութ ցորեն, 140 փութ խաղող, այնինչ խաղող էր հավաքվել ընդամենը 250 փութ, ցորեն շատ քիչ էր հավաքվել, իսկ այգու ծիրանները ցրտահարվել էին:

Այգին ցմառ նվեր տոհմայով՝ Մելիք-Շահնազարյանը դիմում է համապատասխան կազմակերպություններին՝ հարկերը թեթևացնելու խնդրանքով: Դիմումին մասամբ ընդունաբերվում են, ըստ միջև 1927թ. նա չի կարողանում ազատվել մեծաքանակ հարկերից, որոնք բռնագանձելու նպատակով մինչև անգամ միլիոններ են ուղարկում տան ապրանքները աճուրդի հանելու: 1929թ. դեկտեմբերին Մելիք-Շահնազարյանը այգին ետ է վերադարձնում Գավգործկոմին և հարկերից ազատվում, ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք. 90-91:

⁷⁷ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 236:

պատշաճի մարդամեջ դուրս գալու մտահոգությամբ՝ խաչանը դրնեղում է ընկնում, «հնգերհըրվանա փող պառնք անըմ», իր համար ֆրակ ու շլապա գնում, սակայն հանձնաժողովը, թե՛ մասնաժողովը, միգուցե ենթաժողովը, թե՛ կողմնաժողովը չի կարողանում գործը գլուխ բերել և որոշում է հորեյսանը նշել հունիսին, մինչև որ «ծիրանը, թոթը, հունը հանի, վեր դոնաղներին պատիվ տան»⁷⁸:

Հանդիսությունը կրկին հետաձգվում է. 1924թ. նոյեմբերի 14, ապա 16, ի վերջո՝ դեկտեմբերի 17:

1925թ. «Մաճկալ» թերթի գյուղատնտեսական բաժնի վարիչ Կ. Մելիք-Շահնազարյանը, նյութական ծանր վիճակից դրդված, դիմում է Հողժողովոմատ և ստանձնում է Ղամարլուի շրջանի հրահանգչի պաշտոնը: Սակայն առողջական վիճակը չի ներում, և ստիպված է լինում «նստակյաց աշխատանքի» խնդրանքով դիմել Լուսժողովոմ: 1925թ. վերջերին նա նշանակվում է Հողժողովոմատի գրադարանապետ: Հաճախակի դասախոսություններ է կարդում գյուղատնտեսական թեմաներով: 1928թ. ապրիլին, ամառվա ընթացքում գրքերի սպասարկումը դադարեցնելու պատճառաբանությամբ, Մելիք-Շահնազարյանն ազատվում է աշխատանքից: Ընտանիքը կրկին հայտնվում է ծանր կացության մեջ: Երկու օր անց գրադարանապետի պաշտոնը զբաղեցնում է մի երիտասարդ և ներկայանալով նրան՝ հայտնում է, որ կարգադրված է գրքերը իրեն հանձնել: Այս ամենը, իհարկե, վիրավորական էր Մելիք-Շահնազարյանի համար, բայց առավել վիրավորական նա համարում էր այն, որ Հողժողովոմի տեղակալի հրամանով ապրիլի մեկին աշխատանքից ազատված ութ անձանց թվում 50-ամյա գրական և 40-ամյա գյուղատնտեսական աշխատանքի փորձ ունեցող մալդու անունը գրված էր ցուցակի վերջում՝ ծիապաններից, գիշերապահից և կառավարներից հետո: Կ. Մելիք-Շահնազարյանը ցավով է հիշում, թե ինչ նյութական գր-

⁷⁸ ԱճԳ, ք. 236:

կանքներ է կրել 1918-ից մինչև 1928թ.՝ շատ անգամ ցամաք հացի կարոտ մնալով...

4. Մելիք-Շահնազարյանի՝ աշխատանք գտնելու փորձերը ապարդյուն են անցնում: 1928-1931թթ. նպաստ ստանալու խնդրանքով նա քանիցս դիմում է Հոդոթոկոմ և Լուսժողկոմ: Մերթ նրան պարզապես լսում էին, մերթ ժամանակավորապես ընդառաջում, իսկ մեծ մասամբ՝ անուշադրության մատնում, որովհետև ինչպես Մելիք-Շահնազարյանի գրչընկեր Ա. Աթանասյանն էր նկատել «Հայ գրող, հայ հեղինակ լինել՝ կնշանակե միշտ ծոցումդ ունենալ աղքատության վկայական, մի վկայական, որն սյնքան էլ հարգված չէ հասարակության մեջ...»⁷⁹:

1931թ. 4. Մելիք-Շահնազարյանը Պետհրատին է հանձնում Յ.Վ. Գյոթեի՝ «Ռայնեքե Ադվես» միջնադարյան կենդանական էպոսի՝ իր թարգմանությունը: Այն արժանանում է ժամանակի գրական գործիչներ Գ. Լևոնյանի, Ստ. Կանայանի և այլոց հավանությանը: Ընդունելով թարգմանությունը՝ Պետհրատը պայմանագիր է կնքում Մելիք-Շահնազարյանի հետ, ըստ որի աշխատությունն ընդունվելուց վեց ամիս անց հեղինակին իրավիճք է վերապահվում ստանալու հոնորարը՝ անկախ աշխատության տպագրությունից: Սակայն թարգմանությունը, յոթ ամիս ձեռքից ձեռք անցնելով, ոչ միայն չի հրատարակվում, այլև չորս տարի շարունակ գլխացավանք է պատճառում հեղինակին: Ի վերջո դատարանի միջնորդությամբ նա հոնորարը ստանում է մասնակիորեն, որի մի մասն էլ հոժարական փոխանցում է անապաստան երեխաների օգնության ֆոնդին:

1932-1936 թթ. երևանյան շոգերից խուսափելով՝ Մելիք-Շահնազարյանն ամռան ամիսներն անց է կացնում Կիրովականի հանգստյան տանը: Չնայած առաջացած տարիքին՝ նա անդադրում աշխատում էր, ուժերի ներածին չափ ձգտում իր փորձն ու գիտելիքները հաղորդել շրջապատին: Ե՛վ հանգստյան տանը, և՛ զինվորական հիվանդանոցում, որտեղ որդին՝ Լևոնը,

ամրուլստորիայի բժիշկ էր, նա հաճախ էր հայրենակիցների համար կարդում Տմբլաչի Խաչանի ֆելիետոններից, իսկ երիտասարդ զինվորների համար՝ հատվածներ «Ծխախոտը և իր վնասները»⁸⁰ գրքուկից: Փողոցով անցնելիս երեխաներ տեսնելով՝ նա շարք էր կանգնեցնում և նրանց հետ մարմնամարզություն անում:

1937թ. հունվարի 7-ին երևանում տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ: Ձմռան այդ ցրտաշունչ գիշերը դուրսը մնալով՝ Մելիք-Շահնազարյանի առողջական վիճակը վատանում է:

4. Մելիք-Շահնազարյանի ծավալուն ինքնակենսագրության մեջ իր իսկ ձեռքով արված վերջին գրառումը հետևյալն է՝ «1940թ. հունվարի 20-ից մինչև փետրվարի 14-ը՝ ձյուն ամեն օր և անընդմեջ...»⁸¹:

4. Մելիք-Շահնազարյանը մույն թվականի հուլիսի 10-ին երևանում վախճանվում է: Նրա գրչընկեր Ա. Աթանասյանը, արժեքավորելով Տմբլաչի Խաչանի վաստակը, մտահոգվում է նրա թողած գրական ժառանգության ճակատագրով, «4. Մելիք-Շահնազարյանը թողել է շատ հարուստ գրական արխիվ, ուր կան «տպագրության համար պատրաստ» ռազմաթիվ աշխատությունների հետ մասնավոր գրական-մասնագիտական նյութեր, մամակներ, լուրջ ուսումնասիրություններ: Արժեք, որ առաջ դրանք ձեռք ընկնեն և նրա միջից հանվեն ու լույս ընծայվեն արժեքավորները, որոնք Տմբլաչի Խաչանի ընտիր երգիծարանական պատմվածքների հետ կդառնային լայն մասսաների սեփականությունը»⁸²:

4. Մելիք-Շահնազարյանը, լինելով Արևելյան Հայաստանում գիտական պատրաստությամբ գործող գյուղատնտեսների առաջին սերնդից, այդ ասպարեզում իր աշխատանքը տարել է երկու ուղղությամբ. մի կողմից՝ երկար տարիների ընթացքում շրջել, ուսումնասիրել է Անդրկովկասի գրեթե բոլոր շրջանները՝ հատկապես զինագործական և այգեգործական կենտրոն-

⁷⁹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 306:

⁸⁰ Մելիք-Շահնազարյան Կ.Կ., Ծխախոտը և իր վնասները, Շուշի, 1888:

⁸¹ ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 177, ք.135:

⁸² «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 1940, № 20:

ները և այդ ճյուղերի մեջ նորագույն եղանակների արմատավորման առաջին ուսուցիչն է հանդիսացել, մյուս կողմից՝ նա իր գիտելիքները լայն շրջաններին մատչելի դարձնելու նպատակով քառասուն տարիների ընթացքում մեկը մյուսի ետևից լույս է ընծայել մի շարք տեսական-մասնագիտական աշխատություններ, որոնց թվում՝ «Ուղեցույց գործնական գինեգործության» (1885թ.), «Բուսական աշխարհից. մշակված և անմշակ ծառի կյանքը, տարրական այգեգործություն» (1886թ.), «Օխախոտը և իր վնասները» (1888թ.), «Ոգելից ըմպելիքների վնասակարությունը» (1889թ.), «Վազի մշակությունը» (1902թ.), «Ծխախոտի մշակությունը» (1925թ.), «Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու» (1929թ.), «Ինչպես ոչնչացնել մրիկը» (1930թ.), «Ինչպես պետք է հավաքել դեղաբույսերը» (հեղինակակից Վ.Պ. Կալաշնիկով, 1939թ.) և այլն:

1965թ. հունիսին Մելիք-Շահնազարյանի ժառանգները որդին, զինվորական ծառայության զնդապետ, վաստակավոր թիշկ Լևոնը, Զայաստանի Գերագույն խորհրդի նախագահության անդամ, վաստակավոր ուսուցչուհի Մալիանը և Սպենդիարյանի անվան օպերայի և րալետի թատրոնի մեներգչուհի (մեցցո սոպրանո), Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Թամարա Մելիք-Շահնազարյանները իրենց հոր թողած գրական ժառանգությունը սիրահոժար նվիրում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին:

Այդ աբխիվում պահպանվող ընդարձակ ձեռագիր շարադրանքը⁸³ վկայում է, որ Կ. Մելիք-Շահնազարյանը փորձել է իր մելիքական տոհմի պատմությունը ամբողջացնել և Մելիք-Շահնազարյանների տոհմածառը կազմել:

Հայտնի է, որ XVIII դարի 50-ական թվականներին Արցախի մելիքությունների միջև սկսվում են ներքին գծություններ: Վարանդայում իր ավագ եղորդը՝ Ղուկասիին սպանելով, իրեն մե-

լիք է հռչակում և իշխանությանը տիրանում մելիք Շահնազար Բ-ն: Արցախի մնացած չորս մելիքները փորձում են նման ստոր արարքի համար վերջինիս պատժել: Միայնակ մնալով մելիքների հարձակումների դեմ՝ Արցախում գերազահություն նվաճելու նպատակով Շահնազար Բ-ն դաշնակցում է վսչկատուն սարըջալի ցեղի Փանահի հետ, և 1750-ական թվականներին նրան է տրամադրում իր տիրույթներում գտնվող Շուշի բերդը: Շահնազար Բ-ի աջակցությամբ Փանահն իրեն հայտարարում է Ղաբաբաղի խան և թշնամական քաղաքականություն վարում Արցախի և հարևան հայկական գավառների նկատմամբ: Կյանքի վերջին տարիներին Շահնազար Բ-ն զղջում է, փորձում է հաշտվել հարևան հայ մելիքների հետ, մույնիսկ նրանց հետ ոռոսական կայսրին ուղղված թուղթ է ստորագրում՝ ռազմական օգնության խնդրանքով, սակայն ժողովուրդը չի ներում նրան, և մեղքերը քավել փորձող դավաճանի մասին գրույցներ է հյուսում:

Կ. Մելիք-Շահնազարյանը նախանձախնդիր էր, որ սյոդ ամոթալի պատմությունը ստվեր չծգեր հայրենիքի անկախության խնդրով մտահոգված իր մշանավոր մելիքական տոհմի արժանավորների վրա: Ի հակակշիռ Մելիք-Շահնազար Բ-ի՝ գրողը հիշեցնում է, որ Շահնազար Ա-ն պարբերաբար հաջող կռիվներ է մղել օսմանյան կայսրության և կովկասյան ավարառու ցեղերի ոտնձգությունների դեմ և մեծ հեղինակություն վայելել շահ Աբրահ Ի-ի արքունիքում: Վերջինիս հրամանով վերահաստատվել է Շահնազար Մ-ի մելիքական իրավունքը, և տոհմը կոչվել է նրա անունով: Կ.Կ. Մելիք-Շահնազարյանն օգտվել է Մելիք-Հուսեինի դուստր Գայանեի, նաև Հեղինեի ձեռագրերի ընդօրինակումից՝ կատարված Միքայել բեկ Լալարեկյան Մելիք-Շահնազարյանցի կողմից՝ «Վասն ծագման Մելիք-Շահնազարյան տոհմին»⁸⁴:

Բաֆֆու «Լսամսայի մելիքություններից» և այլ աղբյուրներից կատարած մեջբերումներով Կ. Մելիք-Շահնազարյանն իր մտահոգությունն

⁸³ Համառոտ պատմություն Աղվանից իշխանական ցեղերի, Համառոտ պատմություն Աղվանից աշխարհի, ԳԱՍԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., զգ. 73,74:

⁸⁴ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 7429:

է արտահայտում մեր պատմության այդ դժվար ու կնճռոտ ժամանակահատվածի իրադարձությունների վերաբերյալ և հանգում պատմական անհրաժեշտությունից ռիսոյ շատ կարևոր ընդհանրացման՝ հայ ժողովրդի միասնության գաղափարին:

Երկար ու ծանր ճանապարհ է անցել Կ. Մելիք-Շահնազարյանը: Լինելով մեծ հոգու տեր անձնավորություն՝ նա կարողացել է հաղթահարել բոլոր դժվարությունները՝ հաճախ չնկատելով հանապազօրյա հացի պակասը. մարդ, ով ումորով է վերաբերվել ոչ միայն իր անձի հետ կապված մեծարման երեկոներին, այլև գրվելիք մահախոսականներին: Ավելորդ չէ ընթերցողի դատին ներկայացնել Տմրլաչի Խաչանի կտակը՝ գրված այս աշխարհին հրաժեշտ տվող մարդու համար անսովոր հումորով ու մեծահոգությամբ, հուսով, որ այն մի փոքրիկ նրրագիծ

կհավելի մեր անզուգական հայրենակցի դիմանկարին. «Իմ ծանոթ հարգելի ընկերներ, շատ խնդրում եմ, որ իմ մահվան լուրը լսելով՝ նեղություն չքաշեք լրագրության մեջ ձեր ցավակցությունը հայտնելու իմ ընտանիքին, և եթե եղանակը ցուրտ է, անձրևային, ճանապարհները ցեխ, իմ դագաղի ետևից չգաք և դեռ հայհոյեք, թե ինչ ընդախտ մեռավ, մեզ էլ ցեխի մեջ ձգեց: Բավական է, որ մերոնցից չորս-հինգ հոգի ինձ կառքով տանեն և ուրախ տուն վերադառնան:

... Դե՛, ընկերներ, ես գնացի, դուք մնացե՛ք:

Յ.Գ. Բան է, եթե եղանակը լավ եղավ և կամենաք պատփյվ թաղելու տանել, Զուռնա-Տմրլայով տարեք և հայտարարություն տալու տպագրության ծախքը խնայեք, անապաստան երեխաներին տաք կամ քեփ սարքեք, հանգուցյալի գերեզմանի վրա պար թոնելով ասեք՝ Աստված հոգին լուսավերի, լյավ վախտ էն դյունյան քինաց»:

Կ. Կ. Մելիք-Շահնազարյան⁸⁵»:

⁸⁵ ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 183: